

Հ. Յ. Գ.
ՄԱՍԼՈՅ ԴԻՐԱՆ

ԴՐՈՇԱԿ

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՅՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

1903

„Droschak“
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse: 43, rue de la République
REDICTION DU JOURNAL
„Droschak“
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԿՈՎԿԱՍԱՀԱՅԻ ՏԱՓՆԱՊԸ

«Այս է իմաստութեան վերջին խօսքը — նա է միայն արժանի ազատութեան և և կենսքի, ով որ ամէն օր կուով նւաճում է նրանց»:

ԳՐՕԹՆ (ՊՓասուտ)

1825 թվին «Խելքից պատուհաս» — ի հռչակաւոր հեղինակ և Արևելքին քաջ ծանօթ Գրիբոեդով իր բարեկամ Բեդիլովին թէոդոսիայից ուղղած մի նամակում գրում էր. «Ջենովացիներից և հովիւ-թաւարներից յետոյ Ղրիմ եկանք մենք (ուսմներս) — ընդհանուր ժառանգներս, — իսկ մեզ հետ նաև՝ աւերման ոգին, այդ սովորական մեր ուղեկիցը Արևելքում և Արևմուտքում»:

Եւ առաջ ընթանալով միշտ հաւատարիմ աւերման իր ոգուն՝ Ռուսաստանը, ինչպէս անցեալում, նոյնպէս և այսօր՝ ներկայացնում է ընդհանուր հալածանքի, ընդհանուր աւերածի ու բռնութիւնների մի լայնածաւալ ասպարէզ: Ազգութիւն չմնաց Ռուսաստանում, որ չճնշէր, ժողովուրդ չմնաց, որ չխեղդէր, խօսք, կարծիք, իրաւունք, օրէնք չմնաց — նոյնիսկ կայսերական գահերից հռչակուած — որ չտրուէր: Իշխողների և ստրուկների, գիշատիչների և զոհերի, լրտեսների և լրտեսուողների մի ահաւոր բեմ է դա՝ փոխադարձ ուխի և ատելութեան կրքերով թունաւորուած: Ռուսաստանը մրցում է Տաճկաստանի հետ պետական կեանքի բոլոր ասպարէզներում՝ նոյնչափ յաջող բացասականում, որչափ և դրակնում: Եւ վատաբախտ հային վիճակած է ապրել օր-արեւ տեսնելու իրաւունք հայցել այդ երկու մահաբեր բռնակալութիւնների սահմաններում — «սատանայի և խորը ծովի միջև», ինչպէս ասում են անգլիացիք:

Եթէ այս դրութիւնը ընդհանրապէս պարզ չէր մեր նախորդների, մեր պապերի ու հայրերի համար, հասարակական թակակներուց սկսած, այստեղ և այնտեղ մէկը միւսի ետեւից տեղացող ծանր հարածները այլևս կասկած չէր ունէր այդ մասին՝ ժամանակակից սերունդների մէջ:

Եւ հայ դպրոցների փակումից յետոյ, ահա մենք ակա-նատես ենք հայ եկեղեցական կալուածքներին յափշտակման: Այդ կարգի երևոյթները արդէն սովորական ճնշումների արտայայտութիւն չեն, այլ

բացայայտ ձեռնոց, որ վայրագորէն նետում է ոռու աւազակապետութիւնը կովկասահայի ազգային ինքնուրոյնութեանը: Ինչպէս Տաճկաստանում, նոյնպէս և Ռուսաստանում, իզուր անցան ուրեմն «լուութեան», «խոհմութեան», «բարեմիտ հպատակութեան» և «յարմարելու» այն բոլոր պատգամները, որ կովկասահայը դաւանում էր ոռու կառավարութեան վերաբերմամբ: Իզուր էինք մենք լուծ, ուրեմն, մեր անանացած բուրժուազիային ու նրա որդեգրած նորագոյն ինտելիգենցիայի ներկայացուցիչներին — այդ դարձեցիներին, որոնք ընդունակ են, կառավարութիւնից վարձատրելու չափ արժանի եռանդով հայ ժողովուրդից պատրաստել խողովուրդ ոչխարների կամ այլասեւեւած անտարբերների մի հօտ միայն: Իզուր էր ուրեմն կովկասահայը հետևում իր կղերին — այդ պատմական անդամալոյծին, որ կախած ժողովուրդի յոգնած, արիւնոտ մարմնից, բազմել էր Էջմիածնում, առաջնորդարաններում, պետական դպրոցներում և այլուր՝ պրօկուրօրներին, նահանգապետներին, դիրեկտօրներին և յետին ոստիկանի հրամանները կատարելու համար: Իզուր էինք, ուրեմն, կենքի գծում շահերից մղուած — ինչպէս այդ արեւ ենք հայերս շատ անգամ — այստեղ ևս խլացնում մեր մէջ բոլոր բարձր պահանջները՝ պատասխանութեան, համարձակութեան, զոհողութեան, ազնիւ պայքարի մեր ամենալաւ հակումները:

Այո, իզուր, բոլորովին իզուր անցան այդ բոլոր խաբուսիկ ջանքերը, «դուշութեան» այդ թունաւոր քաղաքականութիւնը, անսիրտ ու ստրկամիտ «խելքների» այդ վարակիչ, այդ անբարոյականացնող և միմիայն իրենց «խելքների» համար անձնականապէս շատ ձեռնտու երեմիականները:

Ներկայ համարում տպուած «կովկասեան խաբրիկները» և մի շարք թղթակցութիւններ արդէն տեղի ունեցած հակակառավարչական ցոյցերի մասին՝ գաղափար են տալիս այն դիմադրական տրամադրութեան մասին, որ արտա-յայտում է կովկասահայերի մէջ: Պատկերը լրացնելու համար առաջ ենք բերում այստեղ կրկին մի կտոր մեր ընկերոջ մի նամակից:

«Կալածների յափշտակման այս տագնապայից խրոնդրում ամենաուշագրաւ երևոյթն է ժողովուրդի ծայրէ ի ծայր գնացելն ու շարժելը: Հայ ժողովուրդը ելէքստրակա-նային է մի կրակով, մի զգացումով — դիմադրել, կուել, նայել է մի կրակով, մի զգացումով — դիմադրել, կուել, սարկն թափել: Գիւղ, քաղաք, համարեա ամէն դա-սակարգ, ամէն հասակ այժմ միատեսակ են զգում ու մտածում, միատեսակ պահանջներ արտայայտում,

միատեսակ ծրագրերն կազմում՝ վրէժխնդրութեան, ինքնապաշտպանութեան ուսայլն, Լեւոնըրում եւ բարձրալմանդակներում ժողովուրդը զինւում է: Մի տեղ եւս Կանդակերի մօտ 200-300 կրիստապարզների՝ ձիււոր, զինավառ, սպասող աղքատներն, որ դրոճ սան Մայր-սաճարի պաշտպանութեան համար: Ահա ինչու էջ-միաձինը պաշարած է զօրքերով:

«Դուք լսել էք երևի Աշտարակի ցոյցի մասին, բայց չէք լսել, որ երբ Վաղարշապատի դաւաճանքը հրամայում է կողակներին՝ մտրակներով հալածել ժողովուրդին դէպի գիւղ, այն ժամանակ Սշականից կողակներն ու դաւաճանակաւի զրայ տեղում են նրայանի գնդակներ բաղերի խորքերից եւ ժայռերի արանքներից, ու դաւաճանակաւը ստիպւում է կողակներով յետ գնալ:

«Այլևս անկարելի է գուցի ընդհանուր ցաստ մը, ինչպէս անկարելի է Մասիսից ներքեւ թռչող քարա-ժայռերը կանգնեցնել:

Գովելի դիրք է բռնել հողեւորականութիւնը (այդ բանին մեծ չարիով նպաստել են ժողովուրդը եւ մեր ընկերները)՝ նա մինչեւ վերջին ծայր կը զիմադրէ եւ կամովին ոչինչ չի յանձնիլ կառավարութեան եթէ նրանց մէջ կան թուլասիրտներ եւ «խոճեմներ», որանք էլ որոշ «մշակականներ» սիրելիներն են:

Միակ պախարակելի մօմէնքը, որ թող տեղ հողեւորականութիւնը—դա միւսօտի վառը, համարեա ծածուկ օրհնելն էր... Ժողովուրդը—ուր որ եղայ—յաւ է գգում այս առթիւ եւ սիրտը լցւում է վրէժի թոյնով: Լինչեան թուրը նրա բառնցքումն է հիմա, եւ մի քանի ժամանակից յետոյ, դուցէ, դուք լսէք ստակալի վրէժխնդրութեան դէպքերի մասին»...

Ոգեւորիչ տրամադրութիւն, սրտի խորքում անպատեւած, վիրաւորած ժողովուրդի զայրոյթ. ո՞ր էիք դուք մինչև այժմ... Եթէ դպրոցների փակման ժամանակ հանդէս գայիք շատ նւաղ չափերով անգամ՝ գուցէ իստերիք Գալիցիաների, դահիճ Պլէվնիների եւ անուղիղ Նիկոլանների համար այսօր ճանապարհը դէպի մեր եկեղեցական կալածքները այնքան բաց չհամարւէր, որչափ այդ երեսց այժմ:

Բայց անցածը անցել է, և միանգամայն միթարական է այն վճռական սթափումը, որ տիրել է վերջապէս կովկասահայ հասարակութեան և ժողովուրդին: Ենք յուետես չենք և կարծում ենք, որ մի անգամ արիւնով սրբագործւած դրութիւնը կունենայ իր նշանակալից հետեւանքները և այլևս անդարձ պիտի անցնին-գնան հայ յեղափոխական շարժման առթիւ օրօր երգողների ժամանակները: Անէճք այսուհետեւ լուրթեան, համբերութեան և ամէն տեսակ «խոհեմութիւնների» առաքեալներին: Նգձք այսուհետեւ՝ կուրից խոստախելու, հարւածի տակ ընկճելու, դէնքից փախչելու, վախ ու երկիւղի տեսուկէտից իւրաքանչիւր քայլ լուսաբանելու ընդունակ՝ ամէն կարգի իւրաւիւրակներին: Երեզ անգորութիւնը չէ, որ ապահովում է մարդկային Իրաւունքը, այլ Վախը՝ անդուլ անվիանդ: «Առանց կուրի չկայ իրաւունք, ինչպէս որ առանց աշխատանքի չկայ սեփականութիւն: Որքան ճիշդ է ասւած թէ՛ «երեսիդ քրտինքով պիտի վաստակես քո հացը», նոյնքան ճիշդ է և այն՝ թէ՛ «կուրի մէջ միայն պիտի գտնես քո իրաւունքը»... Արդարութիւնը մի ձեռքում բռնած ունի կշիռ, միւս ձեռքում՝ ս ու ը: Վշիւով նա կշռում է իրաւունքը, սրով պաշտպանում, հաստատում է նրան: Սուրը առանց կշռի՝ մերկ բռնու-

թիւնն է, կշիւը առանց սրի՝ իրաւունքի անդորութիւնը՝ — այսպէս է տրամաբանում գերմանացի Երինգ, եւրօպական ամենահռչակաւոր իրաւաբաններից մէկը:

Թուլամիտ պէտք է լինել՝ այս խօսքերում պարունակող ճշմարտութիւնը չըմբռնելու համար: Սակայն եթէ իրաւունքը իր պաշտպանութեան համար կուր է պահանջում, հապա կուրը իր յաղթանակի համար նեցուկ պիտի ունենայ՝ ու ժ ը: Ուժն է, որ կառավարում է աշխարհս, և մենք ձեռք կը բերենք մեր ուղանները՝ երբ ուժ կունենանք: Ո՞վ նոյնիսկ մի հասարակ լակէյի պաշտօն կը հաւատար այսօրւայ ուուս կայսր Նիկոլայ III-ի պէս սպուշին, եթէ նա չլինէր Ալէքսանդր III-ի որդին. ո՞վ այնպիսի մի էպիլէպտիքի, ինչպիսին է Գալիցիանը, հասարակ ակոռապահի դեր անգամ կը յանձնէր իր տանը, եթէ նա մեծացած չլինէր ուուս կայսերական աւաղակաբունի մօտերքում: Բայց ահա այդ այլասեռւած յիմարների, այդ ցաւագար լըբերի իրար վայել խմբակցութիւնը՝ յենւած որոշ տրագիցիանների և հպատակ ժողովուրդների տգիտութեան վրայ, իր տրամադրութեան տակ է աուել միլիւրդաւորների բիւջէ և իշխում է, ինչպէս ուղում է: Նոյնն է և Տաճկաստանում, ուր Աբդուլ-Համիդ կոչւող հրէջը, եթէ ծնւած լինէր հպատակի ընտանիքում, վաղուց արդէն, իբրև ստորագոյն կարգի ոճրագործ, կախաղան կը լինէր հանւած: Նոյնն է և ուրիշ միապետական ու կէս-միապետական երկրներում:

Համարձակութիւն է հարկաւոր՝ իշխողների լպիւրջ երեսին շարտելու համար իրենց պատշաճ տեղը մարդկային հասարակութեան մէջ. բայց այդ բաւական չէ: Նշխողների կազմակերպւած ուժի դէմ հակադիր ուժ ստեղծելու համար անհրաժեշտ են. ա) ընդհանուր դրութեան և շահերի պարզ գիտակցութիւն, բ) ոչ մի սեսակ զոհողութիւնից յետ չկանգնելու անյողդող վճռողականութիւն և գ) համաձայնութիւն, համերաշխութիւն կուրելու կոչւող տարրերի մէջ:

Անդրադառնալով ընդհանուր հայկական կեանքին այս պայմանների տեսակէտից, կարելի է ընդունել, որ վտանգաւոր կացութեան դիտակցութիւնը օրէցօր աւելի և աւելի է ծաւալւում: Հայ ժողովուրդը իր գլխաւոր և երկրորդական մասերում այսօր արդէն տեսնում է, թէ որքան նման են Համիդ և Նիկոլայ, քիւրդ և կօլակ, մէկը գաղանութիւնը և արիւնարբութիւնը՝ զէնք ընտրած, միւսը՝ մարդատեացութիւնը և ցինիկութիւնը:

Ձ ո հ ո ղ ու թ ե ա ն ընդունակութիւն ևս արտասայտեցինք. Պօլսի, Սասունի, Վանի, Չէլթունի և Տաճկահայաստանի բազմաթիւ ուրիշ վայրերի տւած արիւնին գնաց միանալու Գանձակում, Թիֆլիսում, Բագուում և այլ տեղերում յանուն հայ ժողովուրդի իրաւունքների նահատակւածների արիւնը:

Համբերաշիւութեան սկզբունքը շեշտւած է արդէն այն գործօն հետաքրքրութեամբ, որով ուուսահայը հետեւեց տաճկահայկական դատին, իսկ այսօր գալիս է

նոր արտայայտութիւն գտնելու այն բողոքների մէջ, որոնցով տաճկահայ հոգեւորականութիւնը, ժողովուրդը և ուրիշ գաղութներ ձայնակցում են ռուսահայի կուլին՝ ռուս կառավարութեան դէմ:

Սակայն այդ բոլոր դրական երևոյթները կազմում են դեռ ևս անհրաժեշտ պահանջների սաղմը միայն: Մինչև այժմ ոչ զոհողութեան ինքնավստահ պատրաստակա- նութիւնը ընդգրկեց ազգութեան բոլոր դասակարգերը, ոչ էլ համերաշխութեան, միաբանութեան սկզբունքը դարձաւ կենդանի պահանջ, արիւն ու մարմին՝ ամենուրեք հալածող հայ տարրի մէջ ծամանակ է վերջապէս, որ ներկայ մահաշունչ կացութեան դիմաց, երբ տաճկա- հայկական կոտորածներից յետոյ, գուցէ, գտնուում ենք կովկասահայկական կոտորածների նախատօնակին, կուելու անդրդեւի վճռողականութիւնը և իրար խառնելու, իրար հետ միանալու, իրօք մի ամբողջութիւն կազմելու միահամուռ, միահոգի պահանջը մեր ընդհանուր նշա-

ն ա բ ա ն ը դ ա ո ն ա յ: Պատուել է հարկաւոր քարտէզների վրայ այս կամ այն աւազակապետի կամքով գծած սահմանները, ջնջել է հարկաւոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից և որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատև են լինում: Ո՛չ մի բռնութիւն, ոչ մի հալածանք, ոչ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթէ նա, տոգորած ընդհանուր շահերի գիտակցութեամբ, ունի նաև կուելու անասան վճռողականութիւն և կապած, միա- ցած է դարերով սնւած ու պահպանւած ընդհանուր բնադրների ու զգացմունքների առողջ զարկերակով:

Համարձակութիւն գահակալ խրտուիլակների և նրանց շրջապատող նրանց գործակից բոլոր դահիճների ու անբան սարուկների դիմաց...

Ինքնավստահ վճռողականութիւն՝ ընդհանուր շահերի գիտակցութեամբ լուսավառւած...

Մէկ նպատակ, մէկ ամբողջութիւն՝ յեղափոխական անհաշա կուլի համար...

Ա Տ Ե Լ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ջեռաւոր ու խաւարանիստ պքսորավարէդ
Դէպի մեզ, դէպի մեզ, դէպի մեզ շտապէ,
Ո՛վ Ատելութիւն.

Ու մեր Տրտմութեան հետ քոյրաբար
Բռնաբարւած աւերակներուն վրայ հսկումի նստէ:

Սուգի, Արիւնի ու Չարչարանքի
Մահաբոյժ գիշերներէն յետոյ,
Մաքառումներէն, Բաղխումներէն ու Ընդհարումներէն
Ալ ուժասպառ.

Երբ մեզ մեր հոգեւարքին մէջ իսկ կը լլկեն՝
Վտարելով մեզ մեր կողոպտւած տաճարներէն,
Քեզի կը կառչենք, ո՛վ Ատելութիւն:

Մըրիկներուդ հզօր շունչովը
Մաքրէ մեր հոգիները մարդկային այն բոլոր տըղա-
րութիւններէն,

Որոնք մեր ստրկութեան կուռ կապանքները հիւսեցին.
Մեր նայածքներուն մէջ Դժոխքիդ Հրդեհները դէր
Ու մեր Չայինն մէջ Մուռնչներդ ահարկու,
Մեր Բազումներուն մէջ Կործանումիդ ուժը՝
Ու մեր Սրտերուն մէջ Թոյնիդ սահանքները հոսեցուր:

Որպէս զի Իժեր ու Վագրեր դարձած՝
Քալենք Քեզի հետ
Դէպի ապարանքները Ոճրագործութեան,

Մեր որք ճակատները
Անոնց երկաթէ պարիսպներուն
Մոլեգնորէն բաղխելու:

Այս Զնչումի ու Հալածանքի ծանր օրերուն մէջ,
Ամէն Սրբութիւններէ առաջ
Դո՛ւ ես, որ սրբազան Ատրուշանի մը նման՝
Պիտի հրարիս մեր այրիացած խորաններուն մէջ,
Ու մեր հինաւուրց վանքերու կոչնակները
Թախիծի իրիկուններուն մէջէն
Քու անունդ պիտի համբզեն:

Եւ անէ՛ծք այն կղերին,
Որ Քեզ մարել ճգնի,
Ու եօթն անգամ անէ՛ծք այն մօրը,
Որ իր զաւակը Քեզ չ'ընծայէ:

Ու այսպէս վայրագ, անհաշտ ու քինայող
Վագրերու և Յովազներու վոհմակներու նման՝
Քեզի հետ, ո՛վ Ատելութիւն,
Թափառիմք Ընդհարումներու ճամբաներուն վրայ,
Մինչև որ կարող ըլլանք արգասաւոր ու բարեբեր
ու հայրենի

Մեր դաշտավայրերուն ու սարահարթերուն վրայ
Խաղաղութեան տաղաւարներն ու վրանները տարա-
ծելու:

Վ Տ Ա Ր Ա Ն Դ Ի

Մ Ո Ւ Շ—Ս Ա Ս Ո Ւ Ն

Մուշ, 20/3 յուլիս 1903

Լուր մը ելաւ, թէ խուժը մը յեղափոխականներ անցած են Սասուն: Այդ լուրի վրայ՝ կառավարութիւնը զօրք քաշեց Մշոյ դաշտի չորս կողմը և գիշերները սկսաւ հսկել ճամբաներն ու անցքերը: 15 օր տեւեց այդ կէս պաշարման դրութիւնը, որի միջոցին հայ գիւղացին չէր համարձակէր նոյնիսկ իր արտը գնալ: Թէև քանի օր առաջ վերջացաւ պաշարումը, բայց այժմ ալ ուրիշ դրութիւն մը ստեղծուած է: Զօրքը գիշերով կը յարձակի հայ գիւղերուն վրայ, օդէն մէջ հրացան կը պարպէ ու կը սպասէ. չգիտենք՝ կ'ուզէ գիւղացին գիշերով դուրս քաշել—հանել և գնդակի բռնել, թէ կ'ուզէ իմանալ թէ զէնք ունի հայ գիւղացին, որպէս զի խուզարկէ և ձեռքէն առնէ: Այս վերջինն աւելի հաւանական կը թւի, որովհետև երբ զինուած հայ մը կը նկատուի, թիւրքը կը կարծէ, թէ հազարներով զէնք կը բերէ հոս բաժնելու:

Երկու երեք շաբաթէ իվեր զօրքը Բաղէշի նահանգին մէջ տեղէ տեղ կը փոխադրուի, դեռ յայտնի չէ թէ ինչ նպատակով: Սասուն զօրք բարձրացած է բաւական թւով, բայց դեռ յարձակում գործելու շարժում մը ըրած չէ: Ստոյգ աղբիւրէ կ'իմանանք, թէ կառավարութիւնը դիմած է քիւրդ աշիրէթներուն և խրախուսած է, որ միանան զօրքին ու յարձակին սասունցիներու և հոն եղող յեղափոխականներուն վրայ: Մի քանի աշիրէթներու պատասխանը շատ կարուկ և խելացի եղած է: Անոնք ըսած են. «Ասկէ առաջ ալ մեզի դրդեցիք այդպիսի բան մը ընելու, սակայն երբ եւրօպացի քննիչներ եկան, ամբողջ պատասխանատուութիւնը մեր վրայ ձգեցիք, իբր թէ ինքնագլուխ ըրած ըլլայինք այդ գործը: Ու եթէ հայերու ցուցմունքը չ'ըլլար թէ քրդերը չէին, այլ զօրքերը, եւրօպացին այժմ մեզ ջնջած կ'ըլլար: Արդ եթէ կ'ուզէք այդպիսի բան մը ընենք, բերէք մեզի կայսերական ֆէրման մը այդ իմաստով, որ մենք մեր ծոցը պահենք նեղ պարագային գործադրելու համար, այն ատեն կը միանանք ձեզի՝ ջարդ մը տալու մէջ»:

Սահման, 10/23 յուլիս

Երզրուում համարեա զօրք չէ մնացել: Մուշը շորս կողմից բռնուած է զօրքերով և թնդանթներով: Թողովուրդը ահ ու սարսափի մէջ է. ոչ որ չի կարողանում քաղաքից դուրս գալ և երեկոյեան ժամը 6-ից ամէն մարդ փակուում է իր տանը: Կառավարութիւնը խիստ կասկած է տածում, որ հայերը Մշոյ դաշտում խլրտում պիտի առաջ բերեն: Լուրեր են պտտում, որ մի քանի գիւղեր դաշտում քանդուել են, ազգաբնակչութիւնը լեռներն է ապաստանել, իսկ բանտերում տեղ չկայ, որ հայերով լեցնեն: Սասունի շրջականներում Սուրբ Յովհաննու և Առաքելոց վանքերը թիւրքաց զօրքերով գրաւուած են. ամէն մէկի մէջ տեղաւորուած է 60-70 զինուոր: Եւրօպական հիւպատոսները շուտով Մուշ կը լինին: Կառավարութիւնը պահանջել է մի քանի զինուած հայերից թողնել զէնքերը և անձնատուր լինել, բայց նրանք չեն համաձայնուել և հեռացել են լեռները:

Լրագիրներում երևացած այն լուրը՝ իբր Խնուսի մէջ ընդհարում է տեղի ունեցել, պէտք է վերագրել հեռուեալ իրողութեան.

Մի քանի ժամանակ առաջ մի խուժը խեղճ ու անզէն պանդուխտներ, բնիկ բուլանլիցիներ, Կովկասից անցնում են սահմանը՝ հայրենիք վերադառնալու նպատակով: Ճանապարհին պատահում են զինուորներ, որոնք կողոպտում են նրանց և յետոյ կոտորում՝ իբր յեղափոխականներ: Մի հաւատաք Պօլսից—մեծ մասամբ թիւրքական աղբիւրներից կամ թիւրք կառավարութեանը ծախուած գործակալներից—եկող հեռագիրներին և այլ տեղեկութիւններին: Եթէ ոչ խեղճ, անզէն, ողորմելի պանդուխտներին տմարդաբար կոտորելը կը դառնայ, ինչպէս ներկայ դէպքում, հազարաւոր հայերի դիմադրութիւն կայսերական զօրքերին:

Սրտի առանձին ցասումով պէտք է հաղորդեմ ձեզ նաև, որ ըստ նորագոյն կարգադրութեան, երկրից վերջին տարիները գաղթած հայերի կալւածները, նոյնիսկ շարժական գոյքերը, սկսել են դրուել յարքունիս:

Բասեն, 13/27 յուլիս

Կարինի և Մուշի մէջ առևտրական յարաբերութիւնները կտրուել են՝ կառավարութեան հրամանով: Կարինում՝ բերդը և քաղաքը պահպանելու համար մնացել են միայն թնդանթները: Վերջացած զօրքի մի մասն թողել են Խնուսի բերդում, իսկ մնացածը (870 հոգի) ուղարկել են Մուշ:

Կառավարութիւնը քրդերին գրգռելու համար լուր էր տարածել, թէ ֆէդայիները մտադիր են յատկապէս քրդերին կոտորել: Սրանք էլ մեծ թւով պատրաստուում են Սասունի վրայ գնալու, իբր նախապարձակներ: Կառավարութիւնը իր զօրքերը հանդէս պիտի հանէր քրդերից յետոյ, ինչպէս այդ արևեց Սասունի կոտորածի ժամանակ: Քրդերի առաջին յարձակումը կատարուում է Շէնիքի վրայ, բայց հայերը քշում են քրդերին, իսկ զօրքը փոխանակ օգնութեան հասնելու, հաւաքում է վրանները և իջնում Մուշ իբր թէ քաղաքը պաշտպանելու նպատակով: Երևի՛ բուն պատճառն այն է, որ Վանից Մուշ են հասել անգլիական և ռուսական հիւպատոսները ու Փրանսիական փոխ-հիւպատոսը, որոնք հետաքրքրուում են երկրի դրութեամբ և որոնց աչքի առջև ներկայ հանգամանքներում կառավարութիւնը հայերին կոտորելը նպատակայարմար չէ համարում:

Ոճրագործ կառավարութեան տնկած կախաղանների շարքին մի հատ ևս աւելացաւ: Արնոտ Հայաստանի մի այլ կէտում՝ Երզնկայում, Զէքի փաշայի աչքի առաջ, կախաղան բարձրացրին մեր թանկագին ընկեր Ռուբէնին, մի ժամանակ ամբողջ Երզնկան դողի մէջ ձգող Քեռուն: Մասսային կոտորածներից յետոյ յեղափոխական գործը և հայի արդար վճէժի զգացմունքը խեղդելու համար՝ կառավարութիւնը կախաղանի և տերրօրի ճանապարհն է ընտրել: Երզրում—Արամը, Բայազէդում՝ Յարօն և Խաչատուր վարժապետը, Բաղէշում՝ Մարգար վարժապետը, Էդիբնէյում՝ Պետրոսն ու Օննիկը, Երզնկայում՝ Քեռին... Արնոտ հայրենիքի նահատակներ. երբ պիտի ձեր վերջին հառաչից վճէժի մի հզօրագոյն աղաղակ կազմի ուղղուած բարբարոս թշնամուն. . . Զմեռս էլ Մուշում կախեց մի խեղճ մարդ, նա զար անունով, որ իր կնոջը սպանել էր մահաձեռակառութիւն ընդունելու պատճառով:

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ց Ո Յ Ց Ե Ր Կ Ո Վ Կ Ա Ս Ո Ւ Մ

Հետևեալ նամակները՝ ստացած հետզհետէ մեր խմբագրութեան մէջ ականատես-թղթակիցներից՝ նկարագրում են անդրովկասեան շայլութեան տազնապը եւ ժողովրդական անսովոր ցամառ ժայթքումները.

I. Ա. Լ. Է. Բ. Ս. Ա. Ն. Դ. Ր. Օ. Պ. Օ. Լ.

Յուլիսի 28-ին ամենայն հայոց կաթողիկոսը՝ վերադառնալով Երեկոյեան գնացքով դէպի Սևան կատարած իր ճամբորդութիւնից, գիշերը հանգստացաւ տեղիս առաջնորդարանում, որպէս զի հետևեալ օրը շարունակէ ճանապարհը դէպի Էջմիածին: Կաթողիկոսի մուտքը Ալէքսանդրօպօլ՝ մեծ իրարանցում առաջ բերեց քաղաքի հասարակութեան մէջ ահագին զայրոյթ էր տիրում ժողովրդի բոլոր խաւերում՝ ուս կառավարութեան վերջին կարգադրութեան առիթով:

Միևս օրը առաւօտեան ժամը 9-ից՝ քաղաքի բոլոր լուսաւորչական եկեղեցիների զանգերը սկսեցին լողանջել, որ նշան էր համախմբման: Ժամը 10-ին համարեա բոլոր խանութները փակ էին արդէն և մօտ 5,000 հոգի, տղամարդիկ ու կանայք, հաւաքուած առաջնորդարանի դրան՝ սպասում էին կաթողիկոսի դուրս գալուն, որպէս զի յայտնեն նրան իրենց արդար բողոքը: Ուղարկւեցին պատգամաւորութիւններ: Սրանց բողոքին ունկնդրելով, կաթողիկոսը խօստացաւ ոչ մի թուղթ չստորագրել ոչինչ չյանձնել և բողոքել կառավարչական կարգադրութեան դէմ: Ապա քիչ յետոյ՝ շրջապատուած իր շքամբով՝ դուրս եկաւ առաջնորդարանից և դիմեց դէպի կայարան: Այդ րոպէին անսովոր իրարանցում ընկաւ ժողովրդի մէջ բոլորը միաբերան գոչեցին. «Ա՛ւհափա՛ռ, մի՛ յանձնիր, մերժիր, մենք քեզ հետ ենք»... Ահագին ամբոխը շրջապատել էր կաթողիկոսական կառքը և այդպէս ուղեկցեց նրան մինչև կայարան, բոլոր ժամանակ կրկնելով. «Ա՛ւհափա՛ռ, բողոքիր, մերժիր»...

Տպաւորութիւնը անպատմելի է: Ոստիկանութիւնը ամբողջ կազմով լուռ հետևում էր ժողովրդային այդ հոսանքին: Այարանում յուզմունքը այնքան մեծ էր, որ քաղեր նետուեցին ժանդարմների վրայ, չնայած, որ վերջիններս բոլորովին խաղաղ դիրք էին բռնել: Ուրիշ միջադէպեր ևս տեղի ունեցան: Այդպէս, ճանապարհին դէպի կայարան՝ երբ գաւառապետի օգնականը, կամենալով դիւրութիւն տալ կաթողիկոսական կառքին արագ ընթանալու, փորձեց ինքը ևս մտնել կառքի մէջ, ժողովուրդը իսկոյն վար քաշեց նրան կառքից, նկատելով որ յիր պէս աղտոսներ թողել է այն»...

II. Ե Ր Ե Ի Ա Ն

Հայոց եկեղեցական-վանական կալածքների յարքունիս գրաւման կայսերական հրամանը խիստ դիմադրութեան հանդիպեց: Ռուսահայր բարոյապէս և հոգեպէս այնքան էլ մեռած չէր, որ լուռ ու մունջ տանէր ամէն տեսակ ոսնձգութիւն, ազգային ամէն տեսակ վերաւորանք: Գալիցիի տարիներից իվեր հայերի դէմ հանած հալածանքները այնքան լցրին դառնութեան բաժակը, որ այս անմիտ, անհեռատես սալդաթի վերջին յափշտակութեան փորձը ցնցեց հայ ժողովրդին, ստիպելով նրան դիմադրութիւն ցոյց տալ կոխ յայտարարել զէնքի դիմել՝ բռնաբարւած իրաւունքները պաշտպանելու համար:

Այդ մտքով օգոստոսի 3-ին մի ցոյց կազմեց Երևանը, այն Երևանը, որ մեռած էր հաւարուում, բայց որը շարժեց և ուժգին շարժեց:

Քաղաքի կենտրոնում, նորակառոյց Ս. Լուսաւորիչ եկեղեցում, այդ օրը Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադեանի մահաւան պատճառով կատարւելու էր հոգեհանգիստ, ուր ներկայ պիտի լինէր նաև առաջնորդ Սուքիաս արքեպիսկոպոսը: Մի փոքրիկ շուկից՝ եկեղեցի թափւեց ժողովրդի ահագին բազմութիւն: Ժամասացութիւնը աւարտելուց յետոյ, երբ առաջնորդը հիւսիսային դռնից դուրս գալով՝ ուզում էր հեռանալ նրան կանգնեցրեց ժողովուրդը, պահանջելով անմիջապէս Էջմիածին գնալու տանել ժողովրդի կենդանի բողոքը կաթողիկոսին և միաբանութեան: Առաջնորդը հրաժարւեց, պատճառաբանելով, որ նա մի անգամ եղել է արդէն Էջմիածնում: Ժողովրդի աղաղակը՝ «նորից գնացէք, պահանջում ենք, որ գնաք», օդը թնդացրեց: Առաջնորդի յամառելը առաջ բերեց աղմուկ, որը ստիպեց նրան քաշւել եկեղեցի, մինչև որ յայտնեց պօլիցիական պրիստաւը: Այդ ժամանակ բացւեց մի խուժք մարդկանցով պաշտպանուած պարսպի երկաթապատ դուռը և առաջնորդը յուզմունքի ու աղաղակների մէջ, մօտենալով հրաւիրուած կառքին, նստեց կառքը: Որոշ նշանի վրայ մի խուժք մարդիկ առաջ անցան ու բռնելով ձիերի սանձերից՝ սկսեցին կամաց-կամաց շարժւել դէպի գլխաւոր Աստաֆեան փողոցը, բանի տեղ չդնելով պրիստաւի թախանձանքը՝ ճանապարհ տալ կառքին: Նաղարեան փողոցը լցւեց մօտ 5,000 հոգուց բաղկացած ամբոխով, որը անվերջ աղաղակում էր՝ «Բողոքը, բողոքը դէպի Էջմիածին»: Ժողովրդի ծայրը Աստաֆեան փողոցը հասնելով՝ ծուռեց դէպի քաղաքային այգին և թեքւեց դէպի պօլիցիայի հրապարակը և ապա նոյն աղաղակներով ու ցոյցերով ուղղւեց դէպի այն փողոցը, ուր գտնուում է նահանգապետի տունը: Սկզբում պօլիցիան ապուշ կտրած՝ կորցրեց գլուխը, պրիստաւներ և ոստիկաններ իրար անցան ու նրանց գործ դրած ջանքերը ապարդիւն եղան: Այդ օրը նահանգապետը ամարանոցից վերադարձել էր և իր բնակարանում էր, ուր գտնուում էր նաև ոստիկանապետը: Աղաղակը երկուսին էլ սթափեցրեց. ոստիկանապետը, գոյնը թռած, դուրս պրծաւ ամբոխի առաջ, փորձեց կանգնեցնել հոսանքը, մի երկու խօսք փոխանակեց կառքի մէջ նստած և ամբոխով սխմած առաջնորդի հետ, բայց ժամանակ չտրւեց խօսքը վերջացնելու. ոստիկանապետի ձիգերը ապարդիւն անցան: Ամբոխը գրոհ տուեց, օդի մէջ փայտեր պտտեցին, մէկը հասաւ ոստիկանապետի թևին. ժողովուրդը շարժւեց վիթխարի ուժով, իր հոսանքի հետ քշելով առաջնորդի կառքը: Եւ յաղթական կերպով անցնելով նահանգապետի տան առջևից, ուսաց նորակառոյց եկեղեցու տախտակեայ ցանկապատի ու մեծ այգու միջև անցքով և քաղաքի մեծ հրապարակով՝ բարձրացաւ դէպի առաջնորդարան: Սակայն դեռ առաջնորդարան չհասած՝ հոսանքը ծուռեց դէպի Հրազդանի կամուրջը նոյն աղաղակներով ու ցոյցերով: Ուղեկցող ոստիկանները արդէն սարսափի տակ կարծէք մոռացել էին, որ իրենք ոստի-

կաններ են: Հազարաւոր մօլեգնած ամբօխի հոսանքը հասաւ կամրջին և բռնեց այգիների մէջ ձգւած Էջմիածին տանող ճանապարհը: Ոստիկանապետը դարձաւ քաղաք, յայտնեց նահանգապետին, որը անձամբ հեռագրատուն վազելով, հրահանգներ տւեց Էջմիածնի ոստիկանութեանը: Ոստիկանապետը առնելով իր հետ ստրաժնիկների խումբը, շտապեց դէպի Էջմիածին: Նրանց ետեւից ուղարկւեց նաև երկու վաշտ զինւոր: Գէպի Էջմիածին դիմող բազմութիւնը թողնելով Երևանում թափթփուկներ՝ ճանապարհին հետզհետէ աճեց, իր հետ միացնելով բոլոր հայերին, որոնք պատահում էին: Ոստիկանապետը ստրաժնիկներով հասաւ ցուցարարներին, միմիայն մի անյառող փորձ արեց կանգնեցնելու նրանց, ու իսկոյն օգի մէջ թռան քարեր և ստրաժնիկները քամակ դարձրին: Երեւանից ժամը 12-ին դուրս եկող այդ խումբն ամբողջ Փարսքար գիւղը հասաւ ժամը 2-ին: Ամէն ինչ խաղաղ էր. ոտով քայլող հասգին շղթային հետևում էին մօտ 15 կառքեր: Ուղեկցող ստրաժնիկները գնում էին, որպէս ցուցարարները: Այդպէս հոսանքը մօտենում էր Էջմիածնի սահմաններին, երբ ճանապարհը յանկարծ փակւած գտնւեց մի վաշտ զինւորներով և 50-60 ստրաժնիկներով: Վաղարշապատից եկած զօրքը միացաւ Երևանի զօրքին և նրանց թիւը հասաւ 250-ի: Արգելքը լուրջ էր, դիմադրութիւնը ուժեղ. հոսանքը շարժւեց, ամբողջ կրակ կտրեց, սրերը շողողացին, զօրքը զալպով արձակեց հրացանները, բայց օգի մէջ, ժողովրդի միջեց ևս տրաքեցին ատրճանակներ, զալպերը կրկնեցին, օգի մէջ թռան քարերի կոյտեր, շղթան պատուեց և հոսանքը առաջացաւ տալով մի քանի վերադարձ զինւորներ և ցուցարարներ: Հղթարելու այգիսի փորձեր կրկնեցին մի քանի անգամ, բայց անօգուտ, և հինգ ժամից յետոյ հազարաւոր ամբողջ նոյն աղաղակներով ու ցոյցերով մտաւ Վաղարշապատ, ժողովրդի ոգևորւած ողջոյններով: Ամբողջ ձեմարանի մոտարով լցւեց վանքի բակը: Վեհարանի մոտքը պահող զինւորները դողդողալով մի կողմ քաշւեցին: Տաս հոգուց մի պատգամաւորութիւն մտաւ վեհարան՝ իր հետ առած առաջնորդին: Երեւանի կաթողիկոսի դիմաւորումը ազդու էր, մտքերը խաղաղացող: Ժամը 7-ին ցուցարարները վերադառնում էին նոյն յաղթական կոչերով: Տպաւորութիւնը հսկայական էր. . . Բանտարկւած են 30-ից աւելի հայեր:

III. Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

Գրում եմ օգոստոսի 24-ի ցոյցի մասին, որին ականատես եղայ հէնց այստեղ, Էջմիածնում:

Կաթողիկոսը, երկիւղ կրելով ժողովրդական մեծ համախմբումներից ու արիւնհեղութիւններից, կարգադրել էր մեռօնի օրհնութիւնը կատարել նշանակւած ժամանակից առաջ և գաղտնի կերպով:

Գաղտնիքը այնուամենայնիւ հրապարակ եկաւ և շարժակայ գիւղերից շատ կարճ ժամանակէլ մէջ հաւաքւեց Էջմիածնում մօտ 3 հազար ժողովուրդ: Այդ բազմութիւնից 400-500 կանայք վճռում են իրենց կողմից յատկապէս մի ցոյց անել: Ժամերգութիւնը վերջանալուց յետոյ, կանայք խռնւած, դիմում են վեհարանի բակը, երգելով և «Վեցցէ» ու «Նորջի» աղաղակներով. — «Վեցցէ՛ յեղափոխութիւն, կեցցէ՛ հայ ժողովուրդը, հայ եկեղեցին և նրա անբռնաբարելի իրաւունքը. կորչի բռնա-

կալութիւնը»: Եւ ապա երգեցին ազատ, յեղափոխական բովանդակութիւն ունեցող զանազան երգեր: Գրանից յետոյ կանանց միջից ընտրւեցին մի քանի պատգամաւորներ՝ որոնք ներկայացան Հայրիկին:

Նրանք միաբերան կրկնեցին հազար անգամ արդէն կրկնւած յայտնի բանաձևը. — «Հայ ժողովուրդը առաջարկում է Վեհափառին՝ բոլոր ուժով բողոքել ոռու բռնակալ կառավարութեան վերջին կարգադրութեան դէմ» հայեկեղեցական կալածքները յափշտակելու նկատմամբ և ո՛չ մի դէպքում կամովին չյանձնել կալածքները: Թող կառավարութիւնը բռնի ուժով խլի, որպէս աւազակ. . . Հայրիկը սիրով լսում է կանանց բողոքը, որ առաջինը չէր, իհարկէ, և խոստանում է մինչև վերջին ծայր դիմադրել ու երբէք չյանձնել կամաւոր կերպով:

Արտասանւում են սրտառու, զգացւած խօսքեր, արտասոււում են թէ կաթողիկոսը և թէ կանայք: Արտասուեցները, իհարկէ, չպիտի փրկեն մեզ, և ես արձանագրում եմ միայն կատարւած իրողութիւնը: Այնուհետև նորից երգելով, աղմուկներով ցրւում են: Ոստիկանութիւնը լուռ հանդիսատես լինելով՝ վերջը երկու հոգու բանտարկում է տղամարդկանցից և մի քանի ժամից յետոյ արձակում:

Շարունակ նորանոր պատգամաւորներ և խնդրագրեր են թափւում Էջմիածին, միևնոյն պահանջով — չյանձնել կամովին, բողոքել բոլոր հնարաւոր միջոցներով:

Սաստիկ յուզւած են Արարատեան դաշտի բոլոր գիւղերը, առանց բացառութեան. Սուրմալուի, Սարգաւրապատի, Աշտարակի, Օշականի, Բաշ-Գեառնւայ և այլ գիւղերի հասարակութիւնները, առանձին-առանձին, հաւաքական որոշումներով բողոք են ներկայացրել կաթողիկոսին: Բոլորն էլ միևնոյն ոգով, գրեթէ միևնոյն բովանդակութեամբ: Առանց չափազանցութեան կարելի է ասել որ Անդրկովկասի բոլոր հայաբնակ վայրերը — գիւղերն ու քաղաքները — սաստիկ գրգռւած են և կատաղի կերպով բողոքում են կատարւած աւազակութեան դէմ:

Իբրև այդ ինդրի հետ կապւած իրողութիւն, աւելացնեմ, որ վերին աստիճանի անամօթ դիրք է բռնել Սուրմալուի գաւառապետը: Առանց այն էլ այդ անզգամը շատ լքութիւններ է արել գաւառում. մի կատարեալ հրէշ, որ ամէն ներելի և աններելի միջոցներով ուղղակի խեղդամահ է արել Սուրմալուի հայ ազգաբնակչութիւնը, իսկ մասնաւորապէս վերջին դէպքերի նկատմամբ նա իր լքութիւնը գազաթնակէտին է հասցրել: Սուրմալուն չէզոք դիրքի մէջ է դրել. բոլոր ճանապարհները փակել է ստրաժնիկներով — բառացի կերպով կտրւած է հաղորդակցութիւնը: Իգիւրի գիւղերը և դէպի Էջմիածին անց ու դարձողներին բռնում, լաւ ծեծ է տալիս և ապա բանտարկում:

Օգոստոսի 23-ին Իգիւրի գաւառից մի քանի հարիւր հոգի ուղեցին զօռով ձեռքեր ստրաժնիկների շղթան և գալ Էջմիածին մեռօնօրհնութեան, բայց գաւառապետը աւելի ուժեղացրել էր հսկողութիւնը, և տեղի ունեցաւ կռիւ. մի կողմը՝ փայտերով ու քարերով զինւած ժողովուրդ, միւս կողմը՝ կառավարութեան զինւած կողակներ ու ստրաժնիկներ: Սպանւած են հայերից մի-երկու հոգի, վերաւորւած են մի քանիսը, բանտարկւած են շատերը: Նման ընդհարում տեղի է ունեցել մի շաբաթ առաջ Աշտարակի, Օշականի, Ղլթամարի և այլ հասա-

րակութիւնները ու գաւառապետի, պրիստաւի և ոստիկանների միջև:

Հայրիկը երկու կօնդակ է ուղղել Մինօղին, որով արգելում է կալածքները յանձնել: Մի կօնդակ էլ ուղղել է բոլոր կօնսիստօրիաներին, գործակալներին և երեսփոխներին, որով արգելում է առանց իր գիտութեան յանձնել ունե կալածք կամ եկեղեցական գոյք, դրամ ևն: Նոյն մտքով երիտասարդութիւնը մի թուռցիկ է ցրել երեսփոխներին ու գործակալներին:

Մինօղի բոլոր անդամները և թեմակալ առաջնորդները մէկ-մէկ հրաժարական են ներկայացրել կաթողիկոսին. մի երկու ժողով է տեղի ունեցել թէ սինօղի անդամների, թէ առաջնորդների և թէ աչքի ընկնող միաբանութիւնների մէջ, ուր կազմել են արձանագրութիւններ բոլորի ստորագրութեամբ, որ ոչ մի դէպքում կամովին չպիտի յանձնեն կայքերը:

IV. Կ Ա Ր Ս

Ուրբաթ, օգոստոսի 22-ին, եկեղեցում ծանուցւեց, որ հետևեալ օրը 23-ին հսկում պիտի կատարւի, իսկ 24-ին հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադեանի համար: 23-ին, շաբաթ առաւօտեան, զանգակի առաջին դողանջը լսելուն պէս, բոլոր խանութները փակեցին, նոյնիսկ սրճաանները, գինեաները, որ երբէք չեն փակուում ոչ մի տօնի առիթով: Տաս րոպէսում փողոցը ամայացաւ և ժողովրդի մեծ բազմութիւն շտապեց դէպի եկեղեցի, ուր այնքան մարդ էր հաւաքուել, որ ներսը տեղ չէին լցնելով պատճառով՝ շտաբը պարսպում էին չորքեր: Դուռ ու մտախոհ՝ ժողովուրդը ծնկաչաք ձայնակցում էր տխուր ու սրտառուչ մեղեդիներին: Ոստիկանութիւնը զարմանքով հետևում էր հեռուից ժողովրդի այդ արտասովոր աղօթքին ու տօնին:

Օգոստոսի 24-ին, կիրակի օրը, առաւօտից սկսեցին քաղաք դիմել գիւղացիների բազմութիւ խմբեր, շատ տեղերից քահանաներով ու երեսփոխներով: Եկուորների մէջ կային նաև կին ու երեխաներ: Նրանք իրենց հետ բերում էին բողբոջաբեր, որով խնդրում են Հայրիկին չյանձնել մեր աւանդական սեփականութիւնները: Բողբոջաբերը, որոնց թիւը հասնում էր 50-ի, կրում էին բազմութիւ ստորագրութիւններ: Գիւղական տարրի հաւաքումը շարունակեց մինչև հանդէսի վերջերը: Չը նայելով որ խորհուրդ էր տրուած զէնք չվերցնել հետները, շտաբը հագուստի տակից զինւած էին դաշոյններով, ատրճախակներով, ուրիշները՝ փայտերով ու մահակներով: Գիւղացիների այդ հոծ բազմութիւնը քաղաքացիների հետ մտն 6 հազար հոգի — լցրել էր եկեղեցին, մի խոշոր մասն էլ ներսում տեղ չգտնելով՝ մնացել էր դուրսը: Գիւղացիք այնքան շատ էին, որ քաղաքացիները նրանց մէջ համարեա չէին նշմարում: Առաւօտից քաղաքում, բառի բուն նշանակութեամբ, ոչ մի բաց խանութ չկար առևտրի համար: Նոյնիսկ կառապանները չէին լծել կառքերը: Ժողովրդի մէջ նկատուում էր անսովոր տրամադրութիւն. բոլորը տխուր, մտազբալ էին, ժպիտի նշոյլ անգամ չէր երևում և ոչ մի դէմքի վրայ: Հանգիստաւոր պատարագի ժամանակ զգացւած երգում էր քառածայն խումբը: Յուզել տխրալ շեշտով էին արտասանում քահանաների ու դպիրների մեղեդիներն ու աղօթքները: Գպիրներին թոյլ չտուին յիշել կայսրի անունը: Պատա-

րափի միջոցին քահանաներից մինը ազուր քարոզ խօսեց: Ժողովրդի յուզումը սաստկացաւ: Հոգեհանգստից առաջ, որ կատարւելու էր Մելքիսեդեկ Մուրադեանի համար, մի օրիորդ ճառ կարդաց: Գրանից յետոյ մէկը երգեց. «Ո՛վ հայոց Աստուած... Բոպէն սրտաշարժ էր. ժողովրդին տիրեց անկարագրելի յուզում: Այս ու այն կողմից լուում էին զսպած հեկեկանքներ, որ քանի գնում սաստկանում էին: Մի պարոն խօսեց վերին աստիճանի ցնցոյլ ոգևորիչ ճառ: Ճառի ամէն մի պարբերութիւնից յետոյ լուում էր խլացնող բարձրաձայն հեկեկանք... Դալիս էին ամէնքը՝ կին ու տղամարդ, մեծ ու փոքր, ծեր ու երիտասարդ: Նրբ ճառասացը մի պարբերութեան մէջ հարցական շեշտ արեց դէպի ժողովուրդը, վերջինս ահարկու ձայնով որոտաց Ծ-Յ անգամ. «Պատրոստ ենք, պատրոստ ենք», այսինքն պատրաստ են արեան գնով պաշտպանել իրենց դարաւոր իրաւունքները... Վերջացաւ և հոգեհանգիստը, բայց լարւած, էլէքտրականացած ժողովուրդը երկար ժամանակ չէր ուզում հեռանալ եկեղեցուց: Վերջապէս խնդրեցին գիւղացիներին դուրս գնալ, որպէս զի քաղաքացիները կարողանան շարժել և մօտենալ ստորագրելու խնդր-բողբոջաբերը կաթողիկոսի հասցէին: Գիւղացի կանայք յանդիմանում էին քաղաքացի կանանց, որ վերջիններս զուգւած, զարդարւած են եկել եկեղեցի. նրանք ասում էին. «2էիք կարող սև գլխակապերով գալ. խօս հարսանիք չէք եկել... Կանանց առաջարկում էին ցրել, ասելով որ բաւական է տղամարդկանց ստորագրութիւնը, բայց նրանք չհեռացան: Գուրս եկաւ մի աղքատ պառաւ և պահանջեց, որ իրեն թոյլ տան ամենից առաջ ստորագրել: Անգրագէտ էր, մի ուրիշը ստորագրեց նրա տեղ: Այնուհետև շարունակեց տղամարդկանց և կանանց խառն ստորագրութիւնը: Գուրսը, բակում, ամբոխը խմբերի բաժանած, շարունակում էր խօսել յուզւած ու ոգևորւած. գիւղացիներից շտաբը թերթեր, թուռցիկներ էին խնդրում սրանից, նրանից... Վերջապէս կարողացան ժողովրդին համոզել որ ցրեն: Ժողովուրդը այլքների նման սկսեց լցնել ամայացած փողոցները, բայց էլ չէր ուզում ցրել:

Մաճատիա գիւղի տանուտէրը, որ հրաժարւել էր ստորագրել բողբոջաբերը, սարսափելի ծեծ կերաւ գիւղացիներից և քաղաքացիներից, այնպէս որ նրա դէմքը արիւնով ու ցեխով ծածկեց: Պրիստաւի օգնականը սուրը հանած՝ յարձակեց տղայոց վրայ, բայց տղերքը խիղիս սուրը խլեցին ձեռքից և սաստիկ ծեծ տւին նրան բռնուցքով, փայտով, ոտով ցեխերի մէջ կոխեցին և շորքը բռնուցքով փայտով, ոտով ցեխերի մէջ կոխեցին և շորքը պատռեցին. զոհը փախաւ: Ոստիկանատան բոլոր միւս ծառայողները և պրիստաւը մի ըոպէ անգամ չէին հեռանում ոստիկանատան պատերի մօտից: Սաստիկ վախեցած՝ նրանք հեռուից հետևում էին ամբոխի շարժման: Երբ պրիստաւին խմաց տւին փողոցի մէջ կատարւածի մասին, խիղիս ձի բերել տւեց և դատարկ փողոցներով գնաց ու հրաւիրեց տեղական զօրքը (հայ զինւորներին չէին վերցրել): Զինւորներ, ստրաժնիկներ, գարադավոյներ հետը առած, ձի նստած և ձեռքը ատրճախակին դրած՝ պրիստաւը սկսեց շրջել փողոցները և հրամայել որ ցրեն: Բայց ժողովուրդը հանդարտ ու կամացուկ պատում էր՝ առանց մաղաչափ ուղարկութիւն դարձնելու նրա սպառնալիքներին ու բացականչութիւններին: Գիւղացիները այս ու այն կողմից բացականչում էին. «Միք վախենալ միք շտապիլ, կամաց-կամաց»: Նոյն օրը երե-

կոյեան գաւառապետը գիւղից վերադարձաւ թէ չէ, իսկոյն հրամայեց նորից զօրք բերել և ցրել քաղաքում, բայց քաղաքացիները մինչև գիշերւայ ժամի 10-ը սովորականից աւելի մեծ խմբերով դեռ ման էին գալիս փողոցներում: Շատ տեղերում երիտասարդական խմբեր, բաղկացած 20-30 հոգուց, շրջում էին քաղաքի կենտրոնական մասերում և յեղափոխական երգեր էին երգում: Սարսափած ոստիկանութիւնը բնաւ չմտեցաւ նրանց: Նոյնիսկ ոստիկանատան առաջ կանգնած՝ բարձրաձայն յեղափոխական երգեր երգեցին: Այդ բոլորը տեսց մինչև խոր գիշեր:

Գաւառում կորիս գիւղի քահանան, որ մի զգրելի անցեալ ունի, ընդդիմացել է բողոքագիրը ստորագրելուն, բայց զայրացած գիւղացիները իրենք վերցրել ու ստորագրել են, իսկ քահանային, ձեռքից առնելով եկեղեցու բանալին, դուրս են քշել գիւղից: Ապա պատրաստել են մի խնդրագիր կաթողիկոսին, որ հրաժարեցնէ նրան քահանայութիւնից:

V. Գ Ա Ն Ձ Ա Կ

Օգոստոսի 29-ին, առաւօտեան ժամը 10-11-ին, Գանձակի հայ ժողովուրդը թւով մօտ 10 հազար հոգի—այր, կին, տղայ և աղջիկ—խուռն բազմութեամբ հաւաքուելով քաղաքի վերի հայ եկեղեցու մօտ՝ դիմում է դէպի վարի եկեղեցին, ուր գտնուում է և առաջնորդաբանը, որպէս զի յաջորդ Բէնիկի վարդապետին յայտնէ իր խնդիրը եկեղեցագաւառական կալուածքների յափշտակման մասին՝ վախենալով որ մի գուցէ հոգևորականութիւնը յօժարակամ յանձնէ կառավարութեան: Թողովուրդը նպատակ ունէր պահանջել բացարձակ դիմադրութիւն: Ճանապարհին ոստիկանապետը իր պահանջները ընդառաջ է գալիս և խնդրում է ցրել: Գրան ի պատասխան՝ ամբողջ քարեր է նետում և յետ մղելով ոստիկաններին՝ շարունակում է ձանապարհը դէպի առաջնորդարան: Տեղ հասնելով, ժողովուրդը պահանջում է Բէնիկի վարդապետին: Բէնիկը չի դուրս գալիս: Թողովուրդը վրդովւած՝ կրկնում է իր պահանջը, սպառնալով ներս խուժել, և սկսում է քարեր նետել դէպի լուսամուտները. ջարդում են շատ ապակիներ: Աերջապէս երևում է Բէնիկը և սկսում է հանգստացնել ժողովրդի յուզմունքը, յայտնելով միաժամանակ, որ ոչինչ չի յանձնել յօժարակամ, ինչպէս այդ մասին արդէն հրահանգ է ստացւած վեհափառ կաթողիկոսից: Այդ ժամանակ վրայ է հասնում ոստիկանապետը և սկսում է մեղադրել Բէնիկին, թէ իբր այդ բոլորը նա է ծրագրել: Նոյն բոպէին իմաց է տրւում ոստիկանապետին, թէ պահանջւած վաշտը կամուրջը անցնելով՝ բարձրանում է արդէն դէպի եկեղեցին: Ոստիկանապետը ինկատի ունենալով ժողովրդի լարւած տրամադրութիւնը, հեռացնում է վաշտը. բայց շուտով միջամտում է փոխ-նահանգապետը—ամէնից առւած մի անձնաւորութիւն, հրէս՝ մկրտւած ուսու—որ հրամայում է յետ կանչել զօրքը: Երկրորդ և երրորդ անգամ հրամայեց ամբողջ ցրել, բայց և ամէն անգամ ամբողջ պատասխանեց քարերի կարկուտով ու ատրճանակներով: Յանկարծ բազմութեան միջից՝ դուրս է գալիս մի երիտասարդ արհեստաւոր և դիմելով փոխ-նահանգապետին՝ ասում է. «մենք չենք կամենում մեր ազգային գոյքը ձեռտալ և չենք ուզում քեզ պէս փոխել մեր դաւանութիւնը,

աղտո՞տ»: Սատրապը իսկոյն հանում է ատրճանակը և տեղն ու տեղը սպանում երիտասարդին: Ապա հրամայում է կրակ տեղաբ: Գնդակահարութիւնը տևում է կէս ժամ: Ախրաւորել են մի զինուոր և մի քանի ոստիկաններ: Անմիջապէս մահ գտնողներ եղան հայերից նոյն ժամին 10 հոգի, վերաւորաձայններ՝ 70, որոնցից 20 հոգի շուտով վախճանեցին: Առաջին զոհերից մէկն է մի 13 տարեկան օրիորդ, որի բերանից անցնելով՝ մահացու գնդակը փչում է ամբողջ գանկը: Մի ուրիշ երեխայ, գնդակահար ընկնելով՝ հտերի տակ է գտնում իր մահը աղիողորմ գալարումներով: Տեսարանը դժոխային էր...

Հետեւեալ օրը ամբողջ քաղաքը լցեց ոստիկանապահապաններով: Կարգադրեց միաժամանակ՝ երկաթուղու կայարանում թիֆլիզ գնալու տոմսակ չծախել հայերին: Մէկը, որ մինչև այդ կարգադրութիւնը գնած էր տոմսակ, անմիջապէս ձերբակալեց:

VI. Թ Ի Ֆ Լ Ի Ս

Օգոստոսի 30-ին տեղիս պաշտօնական թերթը հաղորդեց Գանձակում տեղի ունեցած արիւնոտ դէպքը, իհարկէ, աղաւաղումներով: Լուրը արագութեամբ տարածւեց ժողովրդի մէջ. այդ օրը ամբողջ թիֆլիսի ազգաբնակչութիւնը խօսում էր ուսաց բարբարոսութեան մասին:

Կիրակի, 31-ին, վանքի Մայր-եկեղեցու միտի կատարէր հոգեհանգիստ՝ Գանձակի մէջ նահատակած հայերի յիշատակին: Գեռ պատարագը չսկսւած, ժողովուրդը, հետզհետէ ստաւրանալով, լցրեց եկեղեցին. մեծ բազմութիւն ևս մնաց դուրսը: Ինտելիգենտ տարրը աչքի էր ընկնում իր թւով: Ընդհանուր խօսակցութեան առարկան Գանձակի դէպքն էր: Տիրում էր արտակարգ յուզմունք. ձեռքից ձեռք էր անցնում «հայ ժողովրդին» ուղղւած պրօկլամացիան, որ կուռի հրաւեր էր:

Պատարագը վերջանալուց՝ հոգևորականութիւնը դուրս եկաւ բակը և սկսեց կատարել հոգեհանգիստ: «Տէր Ողորմեա՛»-ի ժամանակ ամբողջ բազմութիւնը չորեց: Բոպէն հանդիսաւոր էր և սրտաձմիկի: Ամէնքը պատրաստ էին կատաղութեան արտասուք թափելու...

Բակի մէջ ցիրուցան կանգնած էին ոստիկաններ և թաղականներ, դուրսը՝ բակի դրան մօտ՝ չորս-հինգ հեծելազինուորներ: Քիչ հեռու, Ներսիսեան դպրոցի այրւած կրպակներում, կար պահեստի համար 100 հոգու չափ հեծելազօրք: Երբ հոգեհանգիստը վերջացաւ հայր Տէր-Արարատեանը, ասում են, նրովք արտասանեց կառավարութեան հասցէին. անմիջապէս օդը նետեցին պրօկլամացիաներ և լուսեցին մի շարք «կեցցէ՛ներ»: Ոստիկանները միջամտում են և պահանջում լուել նրանք ուզում են մի երկուսին քարշ տալով դուրս անել, բայց ժողովուրդը գրոհ է տալիս և սկսում է ծեծը: Մի քանի ոստիկաններ ու թաղականներ դրսից դէպի ներս են սլանում, բայց բռնուում ու ծեծւում են: Ամբողջ անընդհատ քարեր է նետում և ատրճանակներ է պարպում պոլիցիականների վրայ: Այդ սոսկալի իրարանցումի միջոցին մէկը բարձրացած զանգակատուն՝ անընդհատ զանգահարում էր: Հեծելազուները քշում է ձիերը և սկսում է մարդկանց ոտնահարել ու մտրակահարել: Կօզակների խուժքը, միացած ստրաժնիկների հետ, անխնայ ծեծում է հանդիպողներին: Զօրքը միաժամանակ գնդակներ է արձակում: Մի երեխայ գնդակահար եղաւ

մի անգուլթ ստրաժնիկի ձեռքով: Մի գործաւոր ծանր վէրը ստացաւ: Հատերը վիրաւորւեցին: Չերբակալեց Տէր-Արարատեան քահանան երեք ուրիշ հայերի հետ: Երբ ամբոխը ցրեց և բակը դատարկեց, եկեղեցու դուռը կողպեցին և պահապաններ կանգնեցրին:

Գէպքից յետոյ Թիֆլիսի փողոցներում ձիով շրջում էին կողակների խմբեր և բաղմամբիւ ոստիկաններ:

Հետեւեալ օրը եկան արձանագրելու Ներսիսեան դըպրոցի գոյքը: Նշանակած ժամին՝ դպրոցի հոգաբարձուներէից ոչ ոք չեկաւ, և յանձնաժողովը նրանց բայակայուն թեամբ կազմեց արձանագրութիւնը:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Ե Ն

6/19 յունիս, 1903

Մայիսի 19-ին, երկուշաբթի վաղ առաւօտեան, ժողովուրդը հանգիստ իր աշխատանքին կերթար. սակայն գետի եզերքը մօտ 40 զինւած ժարդիկ տեսնելով՝ վախէն յետ կը դառնայ և թիւրքերուն կը հարցնէ, թէ այն ինչ ժարդիկ են: Թիւրքերը կը պատասխանեն, թէ շուտով կոտորած տեղի պիտի ունենայ հայոց թաղերի մէջ և խորհուրդ կուտան շուտով երթալ ու տներն ապաստանիլ կամ ազատելու միջոցներ խորհիլ: Ժողովուրդը այս լուրէն սարսփահար, լեղինները ջուր դարձած, արիւնին ահէն սառած՝ կը թողուն տունները — թիւրքերու տուններուն կից լինելու պատճառով — ու կ'ապաստանին բողոքականաց վարժարանը. Կըսկի լացը, սուգը, կական... Դեսպանների միջոցով եղելութեան մասին իմաց կուտան կուսակալին, ասիկա ալ՝ հանգստացնելով վոգոված մըտքերը, կ'ըսէ. «Ե՛րբ և ձեր բաներուն գացէք, ոչինչ չի լինիր, ես երաշխաւոր եմ»: Սակայն ժողովուրդը, ոչ մի տեղ գործի չէր գացած. շուկան ամբողջ օրը գոց էր:

Այս տարի գարնան մի գաղտնի տարածայնութիւն ելաւ քիւրդերու մէջ, թէ կառավարութիւնը հայերուն ջարդելու նոր հրամաններ արձակած է: Հուտով սախնդիրն էլ փակեց կառավարութիւնը, որովհետեւ գործերնին չէր դար, որ իրենց պատրաստած գաղտնի ծրագիրները ժամանակէն առաջ յայտնի լինին և իբր ցոյց՝ այս լուրը տարածող թիւրքը բռնեց և յետ ուղարկեց իր հայրենիքը: Սակայն չպատժեց ան, որ այս ամէն շփոթութիւններուն բուն պատճառը եղած էր — տխրահալ և վատահամբաւ Մահմատը, որ 96-ի կոտորածին ատեն ջարդերու պարագլուխն էր, որ 6-7 հայ մարդ իրարու ետեւէ կարդ-կարդ կանգնեցրեց՝ հրացանին ուժը փորձելու համար, որ մտաւ Սերէմձեանի տունը, տղամարդերը սպաննեց, կիները առեւանգեց և ին, և ին:

Այժմ կառավարութիւնը իր մօտ կանչելով գաղտնի խորհուրդներ կուտայ հետեւեալ քիւրդ պէյերուն՝ մարզիկի Էրիֆ պէյ, մըլանցի Մէհմէտ պէյ, մակուրցի Իրահիմ պէյ, ըմսըկցի Սատիմ պէյ, շանըցի Քամիլ պէյ, հայտարանցի Մէհմէտ պէյ, շիտանցի Էմիր պէյ, շերէֆանցի Հասան պէյ և ին: Տեսնենք, ինչ փոթորիկ կը պատրաստուի մեր գլխուն:

Կառավարութիւնը նոր օրէնք է հանած, որով տուրքերը մի-մի մարդ պիտի հաւաքէ և երեք անգամէն պիտի վճարուին: Չնայած ատոր այժմ 80-90 զօրքերով

հաւաքելու կուգան տուրքերը. կը ծեծեն, կը նեղեն, ունեցած-չունեցածնին կը ծախեն, տուրքի հաշիւն կ'առնան ու կերթան: Գիւղացիներու բողոքները լսող չկայ:

Ն Ա Մ Ա Կ Ա Ն Լ Ա Թ Է Ն

20/3 յուլիս, 1903

Ո՞վ կրնայ թիւրքի կեղծուպատիր քաղաքականութեան դարձածները ճշդիւ իմանար: Հովի նման մերթ այս, մերթ այն կողմէն կը փչէ և երկրի տարբեր մասերու մէջ տարբեր քաղաքականութեան կը հետեւի: Հոն, ուր գիտէ թէ այս ինչ պարագաներու տակ աղմուկ բարձրանալը վնասակար է, իր խստութիւնները քիչ մը կը մեղմէ, սպասելով որ մի այլ առթիւ փոխարէնը ընու:

Բուլանըխէն հաստատ աղբիւրէ կը հաղորդեն, թէ քիւրդ թոռունները կը ձերբակալուին, հրացանները ձեռքերնէն կը խլին: Երբ թէ բարեկարգութիւն կ'ընէ օսմանցին: Այ՛ հաւատացողին: Նոյն տեղէն կ'իմանանք նաև, թէ սպանութեանց թիւր աճած է, քրդութիւնը ծայրայեղորէն գրգռած է հայութեան դէմ և օր օրին կը սպաննէ հանգիպող հայը: Պատճառը որոշ է: Այս գարնան կոտորածի մը հրահանգ տուած էր քրդերուն. երկրաշարժը պատճառ եղաւ այդ հրահանգի գործադրումը յետաձգելու: Այժմ, երբ երկրաշարժի դառնութիւնները մոռցւեցան, քրդերը կ'ուզեն վերսկսել իրենց գործը. սակայն կառավարութիւնը նպաստաւոր չի տեսնէր պարագաները, որովհետեւ երկրաշարժի աղէտը քննելու համար օտար հիւպատոսներ կը գտնուին այն կողմերը: Քիւրդը չի հասկնար այդ քաղաքականութիւնը, հետեւաբար իրեն տուած հրահանգի գործադրման կը հետամտի. իսկ թիւրքը, անկարող ըլլալով իր նեղքին քաղաքականութիւնը անգէտ քիւրդին հասկցնել, սկսած է զայն նեղել և վերջիններն իրենցմասին մտածելով պահ մը մոռցան հայերը:

Բնորոշ փաստ մը պատահած է նորերս: Ամսոյս 15-ին խուլը մը Փէդայի կը տեսնուի հայ գիւղերէն միոյն մէջ: Տեսնողները կ'ըլլան երկու քիւրդ: Մին կը փութայ կառավարութեան լուր տալ իսկ միւսը հայ գիւղը կերթայ և միջոցներ ցոյց կուտայ, որ իր ընկերը անխոսեմ քայլին առջևը առնէ: Մինչև զօրքը կուգայ, Փէդայիները կը յաջողին տեղերնին փոխել առանց տեսնելու: Քրդերէն մին բացարձակապէս կուրանայ Փէդայի տեսնելը և կ'օգնէ հայերուն խնդիրը առանց աղմուկի գոցեն. այդպէս ալ կը յաջողին: Նոյն օրը երեկոյեան, մատնիչ քրդու հայրը և գիւղացիները հայոց գիւղը կուգան, կը կանչեն մատնիչը և հայերու առջև հրապարակաւ կը հանդիմանեն ըսելով. «Փէդային ոչ ոքի վնաս չհասցնեմ, քրդու մը վատ խօսք մը չ'ըսեմ, ալ ի՞նչն է քեզ այդ վատ արարքին մղող շարժառիթը»: Յետոյ ցաւակցութիւն կը յայտնեն գիւղապետին պատահարի մասին և կը խոստանան, որ երկրորդ անգամ իրենց գիւղացիներու կողմէն այդպիսի վատ վարմունք տեղի չպիտի ունենայ:

Նոյն ամսի 17-ին ուրիշ հայ գիւղի մը մէջ Փէդայիները կը նկատուին երկու քիւրդէ, որոնք հրացան կը պարպեն Փէդայիներու վրայ: Քէդայիները առանց ուշադրութիւն դարձնելու կը փութան դէպի լեռը՝ դիբեր

բռնելու: Քիչ ետք շրջակայ քիւրդ գիւղերէն ժողովուրդ 100 զինեալ քիւրդեր օգնութեան կը հասնին, կարծելով թէ իրենցմէ ոմանք կուրս բռնուած են թշնամիի մը հետ: Բայց երբ հայ գիւղը կը հասնին և կ'իմանան թէ Ֆէրայիներ տեսնուած են, լաւ մը կը յանդիմանեն երկու քիւրդերը, որ այդ աղվուկը հանած էին: Յեղապետ աղան կը կանչէ այդ 100 զինեալներն ու կ'ըսէ. «Չեմ ուզեր, որ Ֆէրայիի վրայ յարձակիք. անոնք մեռնող և մեռցնող մարդիկ են: Բայց աստի՛ մեզի ունէ վնաս չեն հասցնելու: Լաւ չէ անոնց հետ թշնամանալ»: Տարաբախտաբար այս բացատրութիւն անցողական երևոյթ է: Եւ որպէս զի սխալ չհասկնաք, թէ քրդութիւնը բարեկրթութեան և հայր սիրելի սկսած է, պէտք է ըսել՝ թէ քիւրդը կը շարունակէ իր ալան-թալանը, աւար-աւերը հայու նկատմամբ և միայն հայ Ֆէրայիէն կը վախնայ ու չ'ուզեր զուր տեղը թշնամանալ անոր հետ:

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

ՀՍԱՆՆԵՐԻ ԶԵՆՈՐԴ ԿԱՄՄԱՆ

Պետերբուրգ, սեպտեմբերի 4

Յուզման օրեր են:

Օր չէ անցնում, որ կովկասեան քաղաքներից, ուր մինչև այժմ լուում էին խորին հպատակութեան ներբողներ և կամ համակերպութեան անվրդով քարոզներ, չհնչէին ժողովրդական բողոքի ձայներ՝ ուղղած «բարեխնամ կառավարութեան»:

Պատճառը այն նոր դաւն է, որ միապետութիւնը լարեց...

Եւ այս անգամ հայկական տկարութեան եկեղեցու դէմ: «Լոյս տեսաւ բարձրագոյն հրաման՝ հայ-լուսաւորչական եկեղեցու կալածքները գրաւելու մասին» — ահա այն հակիրճ հեռագիրը, որ ինչպէս ուռւը պայթեց կովկասեան հայութեան գլխին, ներկայ տարւայ յուլիսի սկզբներին, երբ միամիտ ժողովուրդը, համառուսական շարժումների հանդէպ, իրան համարում էր, զէթ առժամանակ, «մոռացած», ազատ՝ նոր փորձանքներից:

Հետաքրքրական են նախապատրաստական մանրամասները: Ամբողջ եօթն ամիս իշխան Գալիցին, կովկասեան ցաւագարը, Պետերբուրգ հաստատուած՝ մտքեր էր պատրաստում իր հին ծրագիրը յաղթանակով պսակելու համար: Պօբեդօնօսցեվի ի հարկէ, նրան քաջալերեց: Չայնակցեցին մի քանի վարպուրուած «ուժեր» ևս: Եւ սրտապնդուած այդ աջակցութիւններից, նա ներկայացաւ մինիստրական կոմիտէին: Սակայն այդտեղ — անսպասելի բան — փոքրիկ դիմադրութեան հանդիպեց. «Նայարմար է և վտանգաւոր, ասում էին չափաւորները, այս խառն ժամանակներում՝ յարուցանել մի նոր խնդիր և այն էլ այնքան փափուկ, ինչպէս է եկեղեցու կալածքների հարցը»: Մինիստրների մեծամասնութիւնը միացաւ այդ կարծիքին: Բայց ծրագրի գլխաւոր հեղինակը չյուսաւ հատուց: Նա թողեց մինիստրական կոմիտէի և սկսեց այլ ձանապարհներ բռնել պալատի «ազդեցիկներին» համոզել... Պատմում են, որ մինիստրական ժողովը՝ ձայների մեծամասնութեամբ վճռեց մերժել կառավարչապետի ծրագիրը, բայց նորին Մեծութիւնը չկամենալով

վշտացնել իշխան Գալիցինին, որի մի այլ խնդիրը բէջ առաջ մերժել էր, ընդունեց փոքրամասնութեան կարծիքը և բարձրագոյն հաստատեց բացարձակ դողութեան առաջարկը...

Ուշագրաւ է մինիստրական կոմիտէի արձանագրութիւնը այս մասին, որ խնդրի մի փոքրիկ պատմութիւնն է ներկայացնում:

«1897 թւին հայ-եկեղեցական ծխական դպրոցները ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը յանձնելու միջոցին՝ նոյն մինիստրութեան յանձնեցին և դպրոցական կալածքները: Բայց հայ հոգևորականութիւնը յայտնեց այնուհետև մի շարք դատաստանական պահանջներ, ապացուցանելով — ոչ առանց աջողութեան — որ իշխալ կալածքները պատկանում են, իբրև սեփականութիւն, ոչ թէ դպրոցներին, այլ եկեղեցիներին ու վանքերին:

«Այդ հանգամանքը, այլ և հայ հոգևորականութեան քաղաքական օրինազանց գործունէութիւնը ի նկատի առնելով, Աովկասի կառավարչապետ իշխան Գալիցին 1898 թւին խնդիր յարուցեց՝ հայ եկեղեցու բոլոր կալածքները և դրամադուլիները յարբունիս գրաւելու մասին: Իշխան Գալիցինի այդ առաջարկը դիմադրութեան հանդիպեց ֆինանսների և երկրագործութեան մինիստրների կողմից: Երկու մինիստրները ապացուցանում էին, որ այդպիսի զօրեղ, բռնի միջոց, ինչպիսին է կալածքների յարբունիս գրաւումը, հայ ազգաբնակչութեան մէջ խոր դժգոհութիւն կարող է առաջացնել: Ֆինանսների մինիստրը ցանկալի էր համարում, որ եկեղեցական կալածքների վարչութիւնը յանձնէ առանձին մասնատողով, վաճառֆներով: Աւուստրիական մասնատողովը, ուր մահմետական հոգևորականութիւնը ունի ներկայացուցիչներ, կառավարում է Ղրիմի մահմետականների հասարակական սեփականութիւնը: Մասնատողովը պիտի կազմէր՝ ներքին գործոց մինիստրութեան, տեղական կովկասեան վարչութեան և հայ հոգևորականութեան ներկայացուցիչներից, իսկ երկրագործութեան մինիստրը առաջարկեց գործադրել հայոց եկեղեցական կալածքների վերաբերմամբ վարչական նոյն եղանակը, որով կառավարում են Բեսարաբիայի մէջ արտասահմանեան վանքերի կալածքները, այսինքն որպէս զի ընդհանուր հսկողութիւնը գումարների և կալածքների վրայ յանձնէր ներքին գործոց մինիստրութեանը:

«Իշխան Գալիցին և ներքին գործոց մինիստր Սիպիագին կարելի համարեցին ընդունել երկրագործութեան մինիստր Երմոլովի առաջարկը: Այդ առաջարկի համեմատ կազմած օրինագիծը բարձրագոյն հրամանով ենթարկեց առանձին յանձնատողովի քննութեան ստատուս-սեկրետար Ֆրիշի նախագահութեամբ:

«Յանձնատողովը գտաւ, որ առաջարկուած միջոցը, որը ծանր հարւած է տալիս բովանդակ հայ եկեղեցուն, կ'ազդէ ամբողջ հայ ազգաբնակչութեան յարաբերութեան վրայ դէպի Ռուսաստանը՝ թէ պետութեան մէջ և թէ արտասահմանում: Յիշեալ քայլը, յանձնատողովի կարծիքով, ի նկատի ունի գլխաւորապէս կարծել հայ բարձր հոգևորականութեան և ինտելիգենցիայի օրինազանց գործունէութիւնը, բայց այդ նպատակով — այդպէս էր կարծում յանձնատողովը —

կարելի է գործադրել ուրիշ միջոցներ, կարելի է ի միջի այլոց սահմանափակել հայ եկեղեցու ինքնավարութիւնը և հաստատել իրական վերահսկողութիւն եկեղեցական արգիւնքների ու ծախքերի վրայ:

«Այդ պատճառաբանութիւնների համաձայն՝ յանձնաժողովը վերագրեալ ձեռնարկութեան իրականացումը վաղաժամ համարեց: Նոյն եզրակացութեան հետ համաձայնեց և մինիստր Սիպիագին, իսկ իշխան Գալիցին մնաց իր նախկին կարծիքին: Յատուկ յանձնաժողովի արձանագրութիւնը լսելով՝ թագաւոր կայսրը բարեհաճեց յանձնարարել ներքին գործոց մինիստրին, Վովկասի կառավարչապետի հետ բանակցելուց յետոյ, ներկայացնել դիտողութիւններ, թէ ինչ միջոցներ պէտք է ձեռնարկել բաց առնելով վերոյիշեալ միջոցը, հայ հոգևորականութեան օրինազանց գործունէութիւնը դադարեցնելու համար:

«Սակայն ներքին գործոց մինիստրը իշխան Գալիցինի հետ բանակցելուց յետոյ ամենհպատակօրէն զեկուցեց, թէ ներկայումս միակ դրական միջոցը վերոյիշեալ նպատակով՝ կարող է լինել հայ եկեղեցու կալածքների գրաւումը հոգևոր հաստատութիւնների իրաւասութիւնից: Դրա հետ միասին Սիպիագին, ի դէպս հաւանութեան թագաւոր կայսեր, հայցում էր բարձրագոյն թոյլտուութիւն՝ մուծանել յիշեալ գործը մինիստրների կօմիտէաբ:

«Թագաւոր կայսեր բարի հաճութիւնը տեղի ունեցաւ 26 յուլիսի 1901 թ.: մուծանել ներկայ առաջարկը մինիստրների կօմիտէաբ: Ներքին գործոց մինիստր ստատուս-սեկրետար Պլէվէ իմիջի այլոց բացատրում է, թէ առաջարկած ձեռնարկութիւնը բոլորովին հասունացած է և ըստ ամենայնի համապատասխան այն միջոցներին, որոնց ձեռներեց է եղել և դեռ լինելու է ներքին գործոց մինիստրութիւնը՝ հայ եկեղեցու չափ ազանց ինքնավարութիւնը սահմանափակելու համար: Դրա հետ միասին ստատուս-սեկրետար Պլէվէ մատնացոյց է անում, թէ հայ հոգևորականութեան ստացածքների արքունի վերակացութեան յանձնելը (պահելով հոգևորականութեան սեփականութեան իրաւունքը) յարմարութիւն է տալիս կանոնաւոր հսկել եկեղեցական արգիւնքների վրայ և առհասարակ դնել հոգևորականութեան գործունէութիւնը օրինականութեան և կարգի տակ:

«Ընդհանրապէս ստատուս-սեկրետար Պլէվէի կարծիքով, այդ առաջարկը բեղմնաւոր է ու օգտակար և հայ հոգևորականութեան համար, որը այժմ, իշխան Գալիցինի վկայութեամբ, անփորձ ու փնասակար ձևով է օգտուում իրեն պատկանող հողերից:

«Առաջարկութեան էութիւնը կայանում է հետևեալում: Հայ եկեղեցուն և նրա հաստատութիւններին, այսինքն դպրոցներին պատկանեալ բոլոր ստացածքները (թէ եւրօպական Ռուսաստանում և թէ Վովկասում) յանձնուում են երկրագործութեան մինիստրութեան կառավարութեանը, իսկ գումարները՝ ներքին գործոց մինիստրութեան: Վերջինիս այլաբան քրիստոնեաների դէպքում մէնտուում կենտրոնանում է գլխաւոր վերահսկողութիւնը այդ կալածքների և դրամագրութիւնների արդեանց և ծախուց, ինչպէս և դրանց լիակատար հաշվետուութիւնը»:

Եւ նոյն այն օրերին, երբ «կառավարչական Համբաւաբերը» իր պաշտօնական էջերում անմահացրեց նոր կարգադրութիւնը, կովկասեան կառավարչապետը՝ հպարտ իր յաղթութեամբ, շտապեց բռնել հարաւի ճանապարհը, հասաւ Թիֆլիս, կարգադրեց «ամենախիստ միջոցների դիմել» նոր օրէնքը գործադրելու համար, գաղտնի հրահանգներ տուց, պատուիրեց Թիֆլիսի պաշտօնական օրգանի մէջ յօդաւանդներ զետեղել և ցոյց տալ հայոց հասարակութեանը, որ «գրաւելով կալածքները՝ կառավարութիւնը ուզում է աւելի հարստացնել հայոց եկեղեցին», և ապա խաղաղ ու անվրդով քնած խղճով, մեկնեց ամարանոց՝ վայելելու հանգստութեան քաղցրիկ ժամերը...

Բարդ չէ «կալածական պատմութիւնը»: Հայոց եկեղեցին Վովկասի մէջ ունի մեծ կալածքներ, հող, անտառներ, տներ, ինչպէս և դրամական հարստութիւն, կտակած ժամանակի ընթացքում և վաւերացրած օրէնքի կողմից: Այդ հարստութիւնը, չնայած այն թաւանին, որին ենթարկեց դարեր շարունակ, դեռ շատ խոշոր է և հասնում է մօտ 100-120 միլիօնի: Դա կրօնասէր հայի տուրքն է, մատուցած եկեղեցուն, քրիստոնէական վարդապետութեամբ յափշտակած ազգի յարգանքը, նրա աշխատանքի և քրտինքի պտուղը, ներարբերած իր տաճարներին:

Ելմիճինը և Անդրկովկասը տիրապետելուց յետոյ, ռուսաց կառավարութիւնը 1836 թ.ի Պոլօժենիայով ճանաչեց հայ լուսաւորչական եկեղեցու սեփականութեան իրաւունքը և նրա վարչական իրաւասութիւնը:

Օրէնքը ասում է.

Յօդ. 117. — Իւրաքանչիւր շարժական կամ անշարժ ստացած՝ նախանշանակեալ ի պահպանութիւն որևիցէ լուսաւորչական հայոց մեղեքտանի կամ եկեղեցւոյ կամ նոցին վերաբերեալ ստատուած հաճոյ շինածոց՝ համարի ընդհանուր ստացած ողջոյն լուսաւորչական եկեղեցւոյ հայոց:

Յօդ. 121. — Կառավարութիւն ստացածոց լուսաւորչական եկեղեցւոյ հայոց կախի անընդմիջապէս զերիցաւորանաց կամ զեկեղեցւոյցանաց յիւրաքանչիւր եկեղեցիս եղելոց:

Յօդ. 99. — Վանահարը պահպանեն յամբողջութեան զշարժական և զանշարժ կայս մեղեքտանին, և պատասխանատու լինին զկանոնաւոր կիրաւութենէ եկամտից:

Այդ օրէնքի համաձայն էլ կառավարութիւնը կալածքները մինչև մեր օրերը, երբ փչեցին քաղաքական նոր հովեր և հայոց եկեղեցին ընկաւ միապետութեան կասկածոտ հալածանքի տակ, որի վերջաբանն եղաւ յունիսի 12-ի բարձրագոյն կարգադրութիւնը:

Իբրև մեկնաբանութիւն այդ կարգադրութեան՝ հրատարակել է հետևեալ պաշտօնական նենգամիտ հաղորդագրութիւնը.

«Հոյ լուսաւորչական եկեղեցու կալածքները նոյն եկեղեցու հոգևորականութեան ձեռքով կառավարելու վերաբերմամբ կողմնակալութեան գլխաւոր վարչութեան հասարած տեղեկութեաններէից երևաց, որ այդ կառավարութիւնը չէ համապատասխանում ոչ պետական իշխանութեան նպատակներին և ոչ իրեն՝ եկեղեցու օրուներին: Դրա հետ միասին՝ 1897 թ.ի յունիսի 2-ի և 1893 թ.ի մարտի 26-ի Բարձրագոյն հրամաններէից յետոյ՝ հայ լուսաւորչական եկեղեցական ուսումնարանները և նրանց պատկանած գոյքերը ժողովրդական լուսաւորչական մինիստրութեան յանձնելու մտովն՝ հայ լուսաւորչական մինիստրութեան յանձնելու ծագեց ընդգիծութիւն այդ կարգադրութեան իրագործման դէմ, որ արտամութիւն այդ կարգադրութեան ձեռքում պահելու մէջ յայտնեց մի քանի կալածքներ իր ձեռքում պահելու մէջ

որոնցով պէտք է ապահովելին ուսումնարանների գոյութիւնը: Այդ տեսակ երեւոյթները վերացնելու համար՝ անհրաժեշտ նկատուեց հայ լուսաւորչական եկեղեցու կալածքների վարչութիւնը կենտրոնացնել կառավարչական հիմնարկութիւնների տեսչութեան տակ: Այդ խնդրի մասին միջնորդների կոմիտէի կազմած պ օ Լ օ Ժ Ե ն ի Ե ն ներկայ տարւայ յունիսի 12-ին արժանացաւ Բարձրագոյն հաստատութեան: Ներկայ օրէնքը, պահպանելով հայ լուսաւորչական եկեղեցու սեփականութեան իրաւունքը յիշած կալածքների վրայ, չէ զրկում նրան՝ ստացելիք եկամուտների այն մասից, որը, ուսումնարանի պահպանութեան ծախքերը դուրս դալուց յետոյ, կը մնայ ազատ: Հայ լուսաւորչական եկեղեցու կարիքները լցուցանելուց յետոյ՝ ինկատի կայ եկամուտների հարկերին 5 յետաձգումով հիմք դնել այդ եկեղեցու օժանդակ դրամով: Այդ տեսակ դրամադրի կազմութիւնը կարող է ապահովել հայ եկեղեցու բարեկեցութեան կանոնաւոր վարչացումը, մինչդեռ այժմ այդ գաւանդութեան բազմաթիւ հաստատութիւնների մէջ, որոնք ընդարձակ կալածքներ ունեն, շատ կան և այնպիսի ծախքեր, որոնց միջոցները չափազանց սուղ են և գիւղական հոգևորականութիւնը սակաւ ապահոված: Յիշած դրամադրուելը սահմանելով՝ նպատակ կայ օգնութիւն ցոյց տալ կարիք ունեցողներին: Սրա հետ միաժամանակ պատշաճաւոր միջոցներ են ձեռք առնում եկեղեցական կալածքները կառավարելու նոր կարգ հաստատելու համար:

«Պաշտօնական հաղորդագրութեան» այդ մուտք ակնարկները աւելի պարզում են կիսապաշտօնական ներշնչւած յօդուածների մէջ, որոնք լոյս տեսան այստեղ Պետերբուրգ, «Պետերբուրգսկի Վեդոմօստի» և այլ լրագիրներում, ինչպէս նաև Թիֆլիս, «Վալկազ»-ի մէջ, որոնց ձգտումն է համոզել հայոց համայնքներին, թէ կալածքները գրաւելով՝ կառավարութիւնը նպատակ ունի. ա) Աւելի մեծացնել լուսաւորչական եկեղեցու եկամուտները և հետևաբար նպաստել նրա բարգաւաճման, բ) Ապահովել աղքատ հոգևորականներին, որոնց վիճակը այժմ շատ ողբալի է, և գ) Ազատել եկեղեցին և կալածքները ապօրինի յափշտակութիւններից:

Ի հարկէ, ոչ ոք չէ հաւատում: Սրանից կէս դար առաջ, երբ դեռ այնքան նկատելի չէր կառավարչական ծրագիրների ներքին միտքը, հայերի մէջ ճշմարիտ է գտնուում էին միամտներ՝ հաւատացող «բարեխնամ կառավարութեան» «բարեմիտ» ցանկութիւններին, սակայն այդ երանելի ժամանակները վաղուց են անդառնալի կերպով պատմութեան գիրկը անցել:

Փաստերը պերճախօս են: Ուղղափառ կառավարութիւնը, տարիներ է արդէն, ամենաանողորմ միջոցներով ականներ է փորում հայկական եկեղեցու հիմքերի տակ. յաճախ խնդիր յարուցեց երկու եկեղեցիների միացման մասին, պետական գումարներով և խաբուսիկ խոստումներով շատ հայերի ստիպեց կրօնափոխ լինել, յայտարարեց հայոց հոգևորականութիւնը իբրև «հայկական շարժման գլուխ ու միանգամայն վտանգաւոր» — և երբ այս նոր ու չարամիտ քայլն անելու փափուկ որոշման վրայ է, ձգնում է հաւատացնել, զաւելջողական լընութեամբ, որ ինքը նպատակ ունի աւելի ուժեղացնել այն եկեղեցին, որ «թշնամի է ուղղափառութեան» և այն հոգևորականութիւնը, որ «հաղբիւր է հակաուսական պայքարի»:

Հաւատացող, այո՛, չկայ: Այլ ընդհակառակը, ամբողջ հայութիւնը թէ Կովկաս և թէ սահմաններից դուրս՝ միաբերան և միակամ նկատում է վերջին կարգադրութիւնը իբրև մի դաւադիր միջոց, որ նպատակ ունի դրամական տնտեսական ուժով՝ իր ձեռքն առնել ստրկացնել հոգևորականութիւնը, ապա առաջ անցնել և հարածել եկեղեցու

անկախ գոյութեան: Եւ դեռ ուրիշ շատ երկիւղներ, ստեղծած զգայուն ժողովուրդի մտածողութեան մէջ:

Հայ ժողովուրդը, որ այդ հարստութեան միակ աղբիւրն է, դեմ չէ եղել և չէ երբէք՝ հոգևոր վարչութեան վրայ հակողութիւն նշանակելու մտքին: Հայը՝ հոգևորականութեան գերի չէ եղած: Բայց բարեխիղճ, անխաբախ հակողութիւնը կարող է գալ միմիայն ժողովուրդից, որ գերագոյն տէրն է նոյնիսկ եկեղեցու, և ոչ թէ միպետական կառավարութիւնից, որի ճանկերը երկավայր են, որկորը՝ անյատակ, թշնամութիւնը՝ անսահման և բիւր անգամ աւելի վտանգաւոր ժողովուրդի համար, քան ունէ եկեղեցի ու նրա սպասարարութիւնը:

Եւ բռնւած այդ վտանգի երկիւղով՝ ցնցւած նորագոյն անարդարութեան հանդէպ, ժողովուրդը բողոքի և ցասման ճիչ է արձակում:

Այո՛, «հպատակութեան աշխարհի մէջ» տեղի են ունենում անսպասելի և խրախուսիչ իրողութիւններ: Ընդհանուր արթնացումն է: Կովկասեան շատ քաղաքների հայկական շրջանները ժողովներ են կազմում, ուր միակամ որոշումներ են ընդունում հրաւիրելու հայոց կաթողիկոսին, որ եկեղեցու ներկայացուցիչն է, ընտրւած ժողովուրդից, — բողոքել կառավարութեան դէմ, չլսանել կալածքները, և եթէ հարկ լինի, հրաժարական տալ: Առաջնորդներին ու սինօդականներին դիմումներ են լինում նոյն ոգով:

Տատանողները սպառնալիքներ են ստանում: Շատ գիւղերում ժողովներ են լինում, ուր գեղուկները երդւում են մինչև վերջ դիմադրել: Կատարւում են թըշնամական ցոյցեր, որոնց մասին «Երօշակ»-ի խմբագրութիւնը անշուշտ կը ստանայ ի մօտոյ գրած նկարագրութիւններ:

Հնչում են զայրացման ձայներ նոյնիսկ այն երկրից, որ վաղուց արդէն բողոքների գերեզմանոցն է: Եւ իբրև այդ բողոքի արտայայտութիւն, Կ. Պօլսի հայոց պատրիարքը դիմել է Էջմիածնի կաթողիկոսին, դիպլոմատիական մեղմութեան բոլոր ձևերը կրող պաշտօնական հետևեալ գրութեամբ.

«Վեհափառ Ս. Հայրապետ».

«Պօլսոյ օտար ևւ հայ ինքնակրու մէջ՝ Պետերբուրգէն արտասահման ուղղած հեռագիր մը տեսնուեցաւ, որ կը ծանուցանէ թէ յետ այսօրիկ Ռուսաստանի հայոց եկեղեցւոյ պատկան կալուածներն ու գոյքերը կայսերական հրամանաւրով մը՝ պիտի անցնին պետական վարչութեան ձեռք այն գլխաւոր պատճառաւ, որ իբր թէ հայ կղերին ձեռքը կառավարուած ինչքերն ու գոյքերը մատակարարելու լրանալը ոչ պետական տեսակէտով կրցած էր հաճելի ըլլալ ու ոչ ալ հայ եկեղեցիին շահերուն համապատասխանել:

«Այսպիսի անօրէնութիւն մը, որու ստուգութեան չենք ուզեր հաւատ ընծայել, ծանրակշիռ հանգամանք մը ունի կրկին տեսակէտով. — նախ՝ վասնորի միջամտութիւն մը կ'ենթադրէ Ազգին Հոգևոր վարչութեան յատուկ գործերուն, և հայ եկեղեցւոյ պատկանեալ կալուածոց ու գոյքի սեփականութեան ու մատակարարութեան իրաւունքն կ'առնուի անոր ձեռքէն, ու կրկնորով վասնորի անանդի փաստի ծանր ամբաստանութիւն մը կ'ուղղուի հայ եկեղեցւոյ պաշտօնէից դէմ, որոնց վրայ հակելու և ի հարկին, կրք ու և է դեմքում գործուած լինի, կարեւորն ի գործ դնելու իրաւունքն կը պատկանի ամենայն հայոց ընդհանրական Հայրապետին, ու հետևաբար բաւաւոր չլինիք ենթադրել թէ քաղաքական իշխանութիւնը ուղղած լինի այս իրաւունքներն ազգին ձեռքէն առնել և իւրայնիկ տարտամ պատճառարանութեամբ մը:

Նկատելով ուրեմն որ այդ կայրի տնօրէնութիւն մը կրնայ շատ մշտասակար շեռեւանքներ ունենալ իայ եկեղեցւոյ շամար ու մտքներու մէջ մեծ գայթակղութիւն յառակ բերել. նկատելով որ մեր եկեղեցին մի եւ անբաժանելի լինելով, ազգն շամօրէն, որ ի սփիւռս աշխարհի, մասնակից կը գտնուի անոր ընդհանուր շահերուն եւ իրականց, եւ համարաշխարհար զայս պահանջներու պարտաւոր կմք եւ մենք, կ'իտարածակինք խնդիրը մատուցանել սրբազնասուրբ Հայրապետիդ խորին ուշադրութեան եւ ծրարելով ի սմին նոյն հեռագրին ապեալ օրինակը, կ'իտարենք խոնարարաբար որ շնորհ ընէք երկատղիւ մը իմացնել մեզ թէ որ աստիճան ստուգութեան եւնի հեռագրական այդ լուրն ու անդորրել զմեզ եւ շամայն թիւրքարնակ ժողովուրդն, որ մեծ անձկութեամբ եւ անհամբերութեամբ ակն ունի վեհի Տեառը սրտապնդիչ տեղեկութեանց:

Մատուցեալ ի շամայր Օծնալ Անոյ Սրբոյ Նորդ ձգգուրծ
Մնամ Էտրնն անշամանօք խոնարն որդի՝

Մաղաքիա արքեպ. Օրմանեան
Պատրիարք Կ. Պոլսոյ

Կ. Պոլսոյ, 16 յուլիս, 1903,
Ն. 13978

Ժողովրդական պահանջներին ազդեցութեան տակ՝ Ելմիածինը յայանել է իր դժգոհութիւնը կառավարութեան կարգադրութեան դէմ: Սինօղը որոշել է, հակառակ պրօկուրօր Կանչելիի բողոքին, չը յանձնել կալածքները: Անհամար կաթագիկոսը այդ իմաստով կ'ան դառ է աւել սինօղին: Բացի դրանից՝ հայ եկեղեցու ներկայացուցիչը, գտնելով միեւնոսներին որոշումը անհիմն դիմեց Պետերբուրգ: Ահա այն հեռագրի ներքին պատճենները, որոնք փոխանակեցին վերջին շաբաթները Պետերբուրգի և Ելմիածնի միջև:

5 օգոստոս 1903, Գնտերբուրգ

Էլմիածին

Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Մկրտչին

Տիեզերականայով, որ եկեղեցական կալածքների վերաբերմամբ յունիսի 12-ի բարձրագոյն նրամանի դործադրութիւնը շանդիպում է յայադուսնիսի, խնդրում եմ Ձերդ Սրբութեան Նոգալ անյապաղ կարգադրութիւն անել այս մասին: Ամէն մի յեռաձգում, իրրեւ անհնազանդութիւն թագաւորական կամքին, առաջ կը բերի ծանր նեռեւանքներ:

Ներքին Գործերի մենիստր

ՊԼՆԷ

6 օգոստոս 1903, Էլմիածին

Գնտերբուրգ

Ներքին Գործերի Պարոն Մինիստրին

Ի նկատի առնելով, որ յունիսի 12-ի բարձրագոյն նառատում մինիստրական կոմիտէի որոշումը տեղի է աւեցել առանց նախապէս իմ միջոցով տեղեկանալու—ինչպէս այդ անուամ էր շամանման դէպքերում իմ նախորդների ժամանակ—այն շանգամանքների մասին, որոնք կարող էին ուշադրութեան չառնուել կառավարութեան կողմից, եւ օգոստոսի 4-ին, № 958 աւամ իմ կոնդակով, նրանցեցի Սինօղին ժամանակաւորապէս յետաձգել բարձրագոյն նրամանի նրատարակումը եւ ինձ թողնել— իրրեւ եկեղեցու բարձրագոյն պետին—ամենանապատուօրէն զիմել խնդիրքով Նորին Մեծութեան թագաւոր-կայսեր, առաջ բերելով այն նկատուսներն ու շանգամանքները, որոնք կապւած են այս նարցի նետ, եւ ներկայացնել ինձ ամբողջ գործի պատճէնը: Սինօղը, ստանալով իմ կոնդակը, կարողարեց կազմել մի զեկուցում այս գործի մասին, բայց դատախազ Կանչելիի թոյլ չտեց այդ անել. որով կարծես, շակառակ օրէնքի, ուղում էր անձամբ նախալճուել Սինօղի որոշման ձեւը եւ բովանդակութիւնը: Այդ մասին տեղնուտեղը կազմեց

արձանագրութիւն, որը եւ ներկայացրած է ինձ բոլոր տեղումներէ ստացրութեամբ:

Ի նկատի առնելով ինչոր՝ շառ լուրը նշանակութեամբ ամբողջ իայ եկեղեցու շամար եւ վերին ստիճանի անցակալի նշանակեցնելը, որ եւ կարող է աւանայ—չո պարզ երեւում է ինչն այսց այն կարգութիւնից, որ Այնքասնորդուում յունիսի 12-ին եւ այսուայ, Ելմիածնում, օգոստոսի 3-ին ժողովրդի բոլոր խումբից կազմած անգլիս անգլիս՝ անձնապէս, այնու շառ նառալքները զբաւար ինչորդութեամբ ամէն որ դիմում են ինձ խնդրելով Նորին Մեծութեան սոց արկանել ամբողջ ժողովրդի արդասնեցնելը այր մոտին, ինտորտար ինչորում եմ Ձերդ բարձր գերազանցութեան, ժամանակաւորապէս յետաձգել կառավարութեան վերաբերելով կարգադրութեան գործողութիւնը եւ կարգադրութիւն այլ ինձ ամենաուղատակաբար զեկուցուել Նորին Մեծութեան իմ բացատրութիւնից եւ այն ներշնչանքները, որոնք ինձ թուում են անհամար խնդրի կոնսուտար լաճան նառալք: Այդ անուայ դիմում իմ կողմից Նորին Մեծութեան եւ նառալքում եմ մի ջաղ. որ թիւրքում է եկեղեցու պետի գործակալութեան գրացուել գէղը Նոր գերազանց նառալք թագաւոր-կայսրը եւ գէղը իր նառալք:

ՄԿՏԾՁ Կաթողիկոս Ամենայն Հայոց

10 օգոստ. 1903, Էլմիածին

Գնտերբուրգ

Նորին Կայսերական Մեծութեան

Թագաւոր Կայսրին

Ձեր Մեծութիւն, Ամենազանգեմ Թագաւոր

Ներկայ սարայ օգոստոսի 6-ին եւ դիմացի նառալքով Նորին բարձր գերազանցութեան ներքին գործերի գ. մի. նիստը ստառանչերտար Պլէվէին, ինչորով յետաձգել ներկայ սարայ յունիսի 12-ին բարձրագոյն նառատում մինիստրական կամքէի որոշումը՝ իայ եկեղեցուկաւ կալւածքները եւ գրամագրութիւնը կառավարական նիմուրկութիւններէ վարութեան յանձնելու մոտին եւ գրանով կարելութիւն այլ ինձ Ձերդ Կայսերական Մեծութեան սոց արկանել ինձ յանձնում նառալք նառալք, ամբողջ իայ ժողովրդի, արկանեցնելը եւ իմ ամենաուղատակ բարձր ուղտութեան գ. մինիստրից՝ նառալքուում եմ անհամար կերպով կերպով դիմել Ձերդ Մեծութեան ամենաուղատակ խնդրքով ամենաուղատակաբար թոյլաւորել ինձ անձամբ Ձերդ Մեծութեան սոց արկանել ամբողջ իայ նառալք նառալք արկանել իմ կարեւոր բացատրութիւններն ու նկատուսները՝ մինիստրական կամքէի որոշումը կառւանցեցելու մոտին, որոնք թիւրքում է իմ պարտակալութեան գրացուել Ձերդ Մեծութեան եւ ինձ յանձնած նառալք անչեւ:

Ձերդ Կայսերական Մեծութեան ամենազանգեմ արքայապար
Գնտերբուրգ Կաթողիկոս Ամենայն Հայոց

14 օգոստոսի 1903, Գնտերբուրգ

Էլմիածին

Նորին Սրբութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին

Ձերդ Սրբութեան նառալքը, ներկայ ամաւայ 1-ից, ամենաուղատակօրէն զեկուցանելուց յետայ, թագաւոր-կայսրը բարեհաճեց բարձրագոյն նառալքի մարտել Ձեր խնդրքը՝ մինիստրական կամքէի բարձրագոյն նառատում յունիսի 12-ի որոշման գործադրութիւնը յետաձգելու մոտին: Միեռժամանակ Նորին Մեծութիւնը շանց ինձ յանձնել օգոստոսի 10-ի Ձեր նառալքը: Սրա նետ մրտախն նառալքում եմ աւելի մանրամասն ցուցմանքներ՝ շարունակելիք դիմագրութեան նառալքը նեռեւանքների մո-

սին, ինչպէս նաև անձամբ Նորին Մեծութեան ներկայա-
նալու Ձեր դիմումի նկատմամբ»:

Ներքին գործերի մինիստր
ՊԼԻՎԷ

Ահա և այդ «մանրամասն ցուցմունքներ» պարունա-
կող մինիստրական հաղորդագրութիւնը, որի մասին
յիշում է Պէպէի վերջին հետագիրը:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ

Ն.Ա.Խ.Ա.Ր.Ա.Ր.ՈՒԹԻՒՆ

№ 4289

13 Օգոստոսի 1903 թ.

Պետներուրդ

Նորին Սրբութեան

Ամենայն հայոց Կաթողիկոսին
Էջմիածին

Ձերդ Սրբութիւն,
Ողորմած հովուական.

Ի լրումն օգոստոսի 12-ի նուազրի՝ պատիւ ունեմ հա-
ղորդել, որ Թագաւոր Կայսրը, օգոստոսի 7-ին Ձեր հետա-
գրի ամենապատասխորէն գեղեցականուս առթիւ, բարեհա-
ճեց հրաւիրել Ձեր ուշադրութիւնը Ձերդ Սրբութեան ան-
կանոն ընթացքի վրայ՝ ներկայ տարւոյ յունիսի 12-ի մի-
նիստրական կոմիտէի վճիռը զործագրելու վերաբերմամբ
(Օգոստոսի 3-ի Ձեր կոմիտէի վրայ առաջարկութիւն է Սի-
նոյին՝ չեղել Բարձրագոյն կամքի անյապաղ իրագործուից,
այսինքն՝ կատարել հաւատարիմ հպատակութեան ամենա-
ժանր պարտանանցութիւն

Նորին Մեծութիւնը բարեհաճեց իր կայսերական ու-
շադրութիւնը դարձնել նաև այն բանի վրայ, որ ներկայ
դէպքը վերջին ժամանակներս առաջին շեղումն է հայ
եկեղեցու գերագոյն ներկայացող ցիլնների կողմից առաջու-
նանհանազանց ընթացից, և այդ պատճառով հրամայեց
ինձ կիթէ հայ հոգեւորականութիւնը շարունակի իր ան-
հնազանդութիւնը պետական իշխանութեան նկատմամբ,
ձեռնարկել այն հարցի քննութեան՝ թէ որքան է շարու-
նակում առ.ս միապետների հայ եկեղեցուն՝ որպէս ամ
վարչական կազմը Ռուսաստանում՝ համապատասխանել
պետական շահերին:

Պարտաւոր եմ համարում ինձ սուկցինել սրան, որ Ն-
րին Մեծութիւնը հաճեց ինձ յանձնել օգոստոսի 10-ի Ձեր
նուագիրը՝ գանելով անժամանակ այս զարմի առիթով Ձեր
անձամբ ներկայանալը:

Եթէ սակայն յետագայում Ձերդ Սրբութիւնը անհրա-
ժեշտ համարի զայլ Պետերբուրգ Ձեր բանած ընթացքի մա-
սին բացատրութիւններ տալու, հապա դրա համար պէտքէ
ինչպիսի կողիտեան քաղաքացիական մասի կառավարչա-
պետի միջոցով:

Յանձնելով ինձ Ձեր աղօթքներին, խնարհաբար
խնդրում եմ ընդունել իմ խորին յարգանաց և
հաւատարմութեան հաւատարեքը, որով պատիւ
ունեմ լինել

Ձերդ Սրբութեան խննարճ ծառայ
Վ. ՊԼԻՎԷ

Շարժումը կանգ չէ առնում պաշտօնական անձանց ուղ-
ղած դիմումներով, այլ խտանում, աւելի գունաւորում և
հանդէս է գալիս իբրև հաւաքական կոչելու ուղղած հայու-
թեան, նրա զանազան մասերի կողմից: Հանրային ցամառ
նշաններից մէկն է այդ: Ահա թէ որպիսի զայրացկոտ
խօսքերով է դիմում Կովկասի հայ ժողովուրդին այդ
կոչելից մէկը:

«Ձը հասնու արդեօք անվեհեր բողբքի ժամը, երբ ամե-
նատկար զոհն անգամ, իբրև դերագոյն արտայայտութիւն
իւր անկողարպտելի իրաւունքի՝ ցատումով ըմբոստանում է իր
դահիճների դէմ:

«Հերիք է, որքան օրօրեցիկը խոհեմութեան մեղեդի-
ներով խիղակ ու աղին «անխոհեմութիւնը» միշտ աւելի
դեղեցիկ ու օգտակար է եղել:

«Իողջը հայութեան բոլոր անկիւններում, ուր մտածող
մի գլուխ կայ և ըմբոստացող մի հոգի:

«Թող իբրև բողբքի արտայայտութիւն՝ ամենայն հայոց

Հայրապետը հրաժարական տայ և խլէ ամէն յարաբերու-
թիւն հոյ եկեղեցու և ուսու կառավարութեան միջև:

«Թող հայոց եկեղեցիները փակեն իրենց դռները իբրև
սգի նշան»:

«Թող ժողովուրդը կաղնակերպւած ցոյցերով ու հանրա-
գրերով հասցնէ իր արգար բողբքի ձայնը կենարմատական
կառավարութեան»:

«Թող վերջապէս, երիտասարդութեան զգայուն սարըը,
իբրև արտայայտիչ ժողովուրդի ցամառն, կաղնակերպել ան-
հաշտ կուրի համար: Կուր ամէն տեղ և բոլոր միջոց-
ներով բռնապետութեան վայրագ ներկայացուցիչների
դէմ, որոնք մի-մի պատուհաս են դարձել մեր դժբախտ
երկրի համար»:

«Յոյց ամառ ուխտագրութ բռնապետութեան, որ նա չէ
կարող սուղաբար ու անպատիժ կերպով խաղալ մի ազգի
ճակատագրի հետ»:

«Յոյց ամառ աշխարհին, որ երկչոտ, անզգայ ստրուկներ
չենք, որ մեք ևս ընդունակ ենք դիմադրելու, երբ տնտ-
հարում են մեր անկապտելի իրաւունքները»:

Նոր խօսքեր են դրանք, ախորժալուր, բայց տարօրինակ
այն վայրերում, ուր միահեծան կառավարութիւնը անցած
օրերին այլ բան չէր լսում, բայց եթէ խոնարհութեան
մեղեդիներ, անձնէր հպատակութեան մաղթանքներ
եկեղեցու կամարների տակ:

Խեղճ հայ ժողովուրդ:

Դարեր շարունակ աղօթեցիր և աղերսանքն ու
աղօթքը դարձրիր քո կուռքը, քո Աստուածը, քո միակ
քաղաքական իմաստութիւնը: Սարկորէն գլուխ ծռեցիր
կրակապաշտ Պարսկաստանի առաջ: Արաբական բռնա-
պետները ովսաններով մտան քո աւերած հայրե-
նիքը: Սելջուկը ձեռքիդ, սրի տեղ՝ բուրվառ տեսաւ: Շըր-
թունքներիցդ փառաբանութիւն քաղեցին Իրանի տէրերն
ու Կ. Պոլսի արիւնուուշտ հրամայողները: Խաչ ու խաչ-
վառով դիմաւորեցիր Հիւսիսի միապետութեան: Աղեր-
սագրերով և արտասունքով ներկայացար քաղաքական
աշխարհին և խոհեմութիւնն ու լուռութիւնը քո միակ
քաղաքականութիւնը դարձրիր Սուգի օրերին, երբ հո-
սում էր հայ արիւնը և երբ ցեխի մէջ էին գցում քո
անունն ու պատիւը:

— Ի՞նչ շահեցիր:

— Անարգանք և զրկանք...

Դարևոր աղերսանքի սև, անարգ օրեր:

Անցէք, գնացէք:

Ահա լսում են բողբքի հրապուրիչ ձայներ. ծնկաչոր
ժողովուրդը՝ ոտքի կանգնած, մէջքը շուկած՝ բռնութեան
աչքերին է նայում:

Լաւագոյն օրերի լուսաստղն է այս...

Թ Ե Ր Թ Օ Ն

Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ Զ Ի Ն Ո Ւ Ո Ր Ը

(Թարգմանութիւն ԼԱՄՆԵ-ԷՆ)

Ո՛ւր կերթաս, երիտասարդ զինուոր:
Կուռելու կերթամ ես, Հայրենիքի սուրբ սեղանին
համար:

Թո՛ղ օրհնեալ ըլլան բոլ գէնքերդ, երիտասարդ զինուոր:

Ո՛ւր կերթաս, երիտասարդ զինուոր:
Կուռելու կերթամ, արդարութեան, ժողովուրդներու
սուրբ դատին և մարդկային ազգի իրաւունքներուն համար:

Թո՛ղ օրհնեալ ըլլան բոլ գէնքերդ, երիտասարդ զինուոր:

խմբ. 356, Բոսթրին 41. 10, Կապար 16. 20, Սարգստ խմբ. 178, Սարգստ խմբ. 178, Բորենի 57. 30, Գիսաւոր 17. 20, Խենթ 15. 30, Զաւէն 3. 20, Բաղը, Արծիւ, Լուսին, Աղաւնի 99. 30, Բորենի 84, Գրքո 31. 20, Խենթ 135. 30, Գնունի Խոնխոնունի 17. 20, Կապար 17, Փրօտ 232. 20, Խենթ 63, Յովազ 49. 20, Գ. 42, Հր. 21, Սուրբնի 21, Զաւէն 13. 20, Հ. Երկի 102. 10, Բորենի 66, Հեռագրի 71. 30, Հ-ի միջոցով ընկերներէ 356, Կորուած գէպերու փոխարէն 890: Միք Կարօի ձեռքը՝ Միք Կարօ 99, Միք 178, Սուրբ 99, Սրապից 99, Պոտօ 263, Ե. Մ. 33, Ոմն-ի ձեռքը՝ Եղ. Գասպ. 132. 20, Հ-ի միջոցով 653, Սիրեցեալ Վահագն 134, Մօրուր 14, Արծիւի 33. 20, Ութ հարածման մը (100) բաժնուցով 624, (2) դաշոյն 66, Բորենի Յուլիս 17. 20, Գնունի Խոնխոնունի 14, Աւօի 122. 20: Կայծակ խմբ. 50. 20, Արմաւիր 68. 10, Վիճակահանութիւն 59. 20, Հայ ոմն 99, Որոտում խմբ. 478. 20, Սարգստ խմբ. 114. 30, Սարգստ խմբ. 41. 20, Պողպատ 66. 20, Անուածորէն 165 դահեկան: Գումար 7690 դահեկան 30 փարս, Աճիտը 33 դուրուշէն:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԷՆ՝

Գ Ե Մ Ա Վ Ի Կ Յ Վ Ի Մ Ն Ո Ւ Ն Ո Ւ Մ Ի Յ Ն Ո Ւ Վ.
Վահանունի 60 դուան, X. 60, Հրացան 50, Զարտանաշէնացի 50, Զիչեան 10, Ասատուր 10, Կարօ 15, N. 20, Հիւր 26, Ղարիբ 10, Վէրք 5, Սալնոնոցի 50, Ղարաբաղցի 10, Նատատակ յիշատ. 10, Ղարաբաղու 10, Ողջակէզ 10, Արդիւ-Ռահիմ (պարսիկ) 10, Խուսեֆ (ասորի) 10, Էս-էն 10, Զլուծայ 5, Միքայ-Մահամէտ եւ Միքայ-Մէլիքի (պարսիկ) 10, Հայ 10, Նայ 10, Ոսկերիչ 5, Փիթրամ 10, Ժամագործեան 10, Ազատութիւն 10, Համակորոյ (ռուս) 10, Ասլան 20, Առաքինութիւն 25, Բարեգործութիւն 15, Սիրաք 20, Գուգարցի 10, Գնդակ 10, Պօղոս Ստ. 5, Համակորոյ 5 դուան: Գումար 616 դուան:

Տիկ. Աննա մի ժամացոյց 115 դուան, տիկ. Նագեի 50, տիկ. Սանդուխտ մի մատանի 16, տիկ. Մէրիսաթուն 10, տիկ. Վարդուհի 10, տիկ. Մէրջան 5, տիկ. Աննա 3, օր. Ժաղիկ 5, օր. Սօֆիա 10, օր. Էլիզա 10, օր. Գուգուրի 5, օր. Հայկանդուխտ 5, Գիւղական աղջիկ 5, Հայասէր 5, X. V. 10, լայն 5, Գիծ 3, Յոյս 2, Խենթ. 2, տիկ. Եւա 10, տիկ. Մարիամ 3, Ոմն 2, Դաւթեան 4, Միլութիւն 3, օր. Աննա 2, օր. Ժաղիկ 2, օր. Հայկուհի 3, օր. Հայուհի 2, Ոմն 2, Աղբիւր 6, Վասիկանուշ 5, Գուրգէն 3, Զարուհի 3, օր. Մարգրիտ 2, Խաղաղութիւն 5, Ոմն 5, տիկ. Խաչիսաթուն 5, Մ. Տէր-Մ. 2, Ոմն 5: Գումար 350 դուան:

Շ ո ռ ա լ եւ Սրբավայր գիւղերից (մարտ 27, 1903 թ. N° 3 հանգանակութեան թերթով.

Ամբակում քահանայ Արծաղանեանց 10 դուան, Պետրոս 10, Բաքաշան 2, Երեցիտիսան 4, Եղեայ երկրագործ 2, Ղազար 4, Սարգիս 4, Մեսրոպ 4, Դաւիթան 2, Մի ոմն Սեդրոս 10, Միկտիչ 3, Արամ 4, Եսայի 3, Բաբա 3, Զոհրաք 5, Տիգրան 4, Յարութիւն 10, Ալէք 10, Վահան 8, Թորոս 6, Սահակ 6, Խաչո 8, Կապուտ 3, Կայէն 8, Մանուկ 6, Երեցիտիսան Խաչիկ 3, Մարտիրոս Յարութիւնեան 3, Եղիա Յովասափեան 4, Պողոս 5, Վարդան 2, Աստուածատուր 3, Մեհրաբեան 6, Յովսէփ 4, Մրնացական 3, Ղազար 4, Ստեփան Զարարեան 4, Յովհաննէս Գեորգեան 3, Յովհաննէս Զարարեան 4, համարածու 2 դուան: Բ ա շ Վ ա թ ո Վ ա ն յ մ ա տ ու ռ ի ց՝ Խ. Յակոբ 8 դուան, Բ. Աղախան 8, Ե. Աւօ 5, Ե. Յովսէփ 4, Ս. Աստուածատուր 2, Ա. Ստեփան 5, Ե. Թամպէրի 5, Առաքել 3, Ա. Ղազար 3, Միքայէլ 2, Ակօ 5 դուան: Գումար 240 դուան:

Սուլթան-Համիդ խմբից (մարտ 27, 1903, N° 6 հանգանակութեան թերթով) 170 դուան:

Ընդհանուր գումար 1376 դուան:

ԲԱՐՁՐԱՒԱՆԳԱԿԻ Պատ. ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԷՆ՝

Ս ա լ Ն ո յ Ձ ո Ր ի Կ ե Ղ Ր. Կ Ո Մ Ի Տ Է Ի մ ի Յ Ն Ո Ւ Վ.
Ապահովեաց Ժաղակաւէտ շրջանի Սուրբանդակ գիւղի խմբէն (1902-ի հաշիւն) 160 դահեկան, Արթուն գ-ի խմբ. 60, Խոնոշք գ-ի խմբ. 150, Զրա գ-ի խմբ. 110, Զրագիւղի Անիւձէն 80, Բլլտակ գ-ի խմբ. 245, Մարք գ-ի խմբ. 80 (1903 յունւարին), Խոնոշք գ-ի խմբ. 120, Վիկտոր գ-ի խմբ. 150, Բաղիբ գ-ի խմբ. 80, Արթուն գ-ի խմբ. 60, Զրագիւղի խմբ. 100, Զարաղաշտ գ-ի խմբ. 40, Բլլտակ գ-ի խմբ. 110, Սուրբանդակ գ-ի խմբ. 40, Մարք գ-ի խմբ. 40, Գազաթ գ-ի խմբ. 89, Փայլուն գ-ի խմբ. 220, Բազարջակ գ-ի խմբ. 60, Անլորի գ-ի խմբ. 20: Գումար 2014 դահեկան:
Ժ ո Վ Կ Յ ա յ Ե ա ճ շ Ր Յ Ա Ն Է Ն (1902-ին) Ինսակունը գիւղի խմբ. 100 դահեկան, Նորաշէն 280, Կանանշ գ-ի խմբ. 20:0 1903 թ. յունւարին Անեթակ գ-ի խմբ. 185, Պալ գ-ի խմբ. 40, Կանանշ գ-ի խմբ. 240, Զմակ գ-ի խմբ. 80, Նորաշէն գ-ի խմբ. 100, Զորէղ գ-ի խմբ. 60, Ժաղիկ գ-ի խմբ. 100, Ժերմակ գ-ի խմբ. 60, Ինսակունը գ-ի խմբ. 310 դահեկան: Գումար 1900 դահեկան:
Ա ն ն ի ի շ Ր Յ Ա Ն Է Ն Դ ժ ո Վ Յ ի մ ի Յ Ն Ո Ւ Վ. 108 դահեկան Պ ո լ -

ր ա կ ի շ Ր Յ Ա Ն Է Ն Ա յ ա տ ա ժ գ - ի խմբ. 100, Սողոմ գ-ի խմբ. 70, Տարծն գ-ի խմբ. 100, Յանատակ գ-ի խմբ. 303, Ժովակի գ-ի խմբ. (Սարգստի ձեռամբ) 100, Զար գ-ի խմբ. 40, Խոնդ գ-ի խմբ. 40, Միջածոր գ-ի խմբ. 40, Նւէր զանազաններէ 205, տուգանք 130, Ժաղակաւէտ շրջանի Պայծակ գ-ի խմբ. (1903 մայիսին) 80, Փայլուն գ-ի խմբ. 60, Ուրուական շրջանի Հայաքնակ գ-ի խմբ. 200 (1902 դեկտ.), 65 (1903 յունւ.), Պողպաթէսան գ-ի խմբ. 85 դահեկան: Ընդհանուր գումար 5640 դահեկան:

ՆԱԻԱՅԱՆԳՍԵՒ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԷՆ՝

Գ ո Վ ո Ր խմբ. (1902 հաշիւն) 40 ուրբի, 30 յունիսից մինչև 16 յունիս՝ Գազան Տարծնացի խմբ. 59, Անիւձ խմբ. 49. 90, Մուշեղ խմբ. 32, Մ. Կ. Բ. Դ. Ա-ի միջոցաւ 51. 70, Դեբրկայ խմբ. 3. 60, Արծիւ խմբ. ք. մաս 16. 80, Ժովասար 23. 20, Բօզ-Էօզուլ 8, Խաչալիք խմբ. 40, Ժիրինկատար խմբ. 47. 60, Սուրբնիսի խմբ. 16, Հայկազեանց խմբ. 50, Վարազդատ 60, Տարծնացի 47. 50 ուրբի:
Ջ Ր ա շ Է Ն ի ց՝ Գ ո Վ ո Ր խմբ. 62. 50 ուրբի, Խամուր բերդ խմբ. 50, Ղարիբ խմբ. 40, Վիշապ խմբ. 50 ուրբի, Արշաւիր խմբ. 27 ուրբի, Գ ո Վ ո Ր խմբ. 58, Խամուր բերդ 71, Ղարիբ 31, Վիշապ 42, Աստու գիւղի Վագր խմբ. 10, Մի մամաւոր խմբ. Արշակի ձեռքով 17. 40 ուրբի:
Յ ո լ խ մ 18-ից մինչև 30՝ Բազեբրունի խմբ. 27 ուրբի, Բազրատունեաց խմբ. 27, Եանթ խմբ. 15. 45, Մարզանք 25, Արշաւիր 0. 60, Բիւրակ խմբ. 28 ուրբի:

Նոր Բաղաքի Վարչ-ից (Տ-ի ձեռամբ զէնքի համար) 300 ուրբի, Անաբեկի խմբից՝ Բագէ, Աղբիւր, Հաճի, Անիւձ, Փաստաւազ, Եանթ, Պիշի 1-ական ուրբի:

Նոր-Կեանք խմբ.	8. 50 ուրբի	Կիթակ խմբ.	21. 05 ուրբի
Տալան	5	Արշաւիր	25. 60
Բազեբրունի	21	Ճորոխ	9
Եանթ	7. 10	Տարծնացի	9. 50
Ժովասար	15. 80	Արծիւ	8. 20
Նոր-Կեանք	15. 30	Դեբրիք	6

Մ. Եանազարեան 5, Յ. Ղարիբեան 15, Տուգանք մօրուսից 200, Զորաշէնի Խամուր բերդ 54, Կարէ 12. 60, Զորաշէնի Գառնիկ խմբ. մի հրացանի համար 20, Տարայից 40, Սիմօնի անցեալ տարւան հանգանակութիւնից 5, Զորաշէնի Ղարիբ խմբ. 40, Արշաւիր խմբ. 40, Աղաներից 18, Մուշեղ 20, Բօզ-Էօզուլ 9, Վահրամ 0. 50, Բազրատունի խմբ. 31. 70, Վարժապետ 7, Վահրամ 0. 50, Ա. Մուրատեան 1, Ս. Ղազարեան 1, Յ. Միլիթարեան 1, Զորապետից Միլիթարից 5, Ս. Ե-նեանից 100 ուրբի տուգանք, Մ. Աղասարեանց 5, Ս. Ապատանից Կանաքի Մանչից 10, Տ. Կատարից 2, Արահամ Գրաւորի 5, Յովհաննէս 10, Արծիւ խմբի Լուսիկից 5 ուրբի:

Մ Ա Հ Ի Ա Ն Պ Ա Տ Ի Շ

Պօլտոյ Կեղրոնական կոմիտէի վճռագրով՝ Պուրկասի 28 սնտուկ վէնքի գործին մէջ զլխաւոր յանցաւոր ճանջեած ե գառապարտած Կ ա Ր ա պ ե տ Մ ա Ր - տ ի Ր ո ս ե ա ն ը տեւորի ենթարկեցաւ բովանական Գալաֆաթ բաղաքին մէջ: Տեւորիստը ազատ է:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԷՐԻՔԵՐ

(ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ)

Կիրքը բաղկացած է 368 երեսներից ե պարունակում է «Կովկասեան խաբրիկները» մեծ մասը, փոփոխած ե լրացած, նաև նոր գլուխներ:
Գինն է 3 ֆրանկ, Ռուսաստանուում 1 ու 50 կոպէկ:

Խմբագրութեանս գիմել հետեւեալ հասցեով՝
Rédaction du «Droschak», Genève (Suisse)